Վերադարձի իրավունքը

Վերադարձի իրավունքի իրավաքաղաքական հենքը

Վերջին շրջանում արցախցիների վերադարձի իրավունքի մասին եղած դիրքորոշումներ

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական գրասենյակ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024
4րդ թարմացում
ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 341

ԳՄԴ 67.9

Վ 490

Վերադարձի իրավունքը / «Հայ դատ» հիմնադրամ.- Եր.: ԱՁ «Ֆելիքս Դադիկյան

Վ 490 Ավետիքի», 2024.- 42 էջ:

«Վերադարձի իրավունքը» գրքույկում ներկայացված է վերադարձի իրավունքի իրավաքաղաքական հենքը, դրա կիրառելիության միջազգային նախադեպերը: Գրքույկում անդարադարձ է կատարվում արցախահայության վերադարձի իրավունքին, միջազգային կազմակերպությունների եւ պետությունների կողմից արցախահայության վերադարձի իրավունքի կարեւորմանը:

ՀՏԴ 341

ԳՄԴ 67.9

ISBN 978-9939-1-1872-7

© ԱՁ «Ֆելիքս Դադիկյան Ավետիքի», 2024

ISBN 978-9939-1-1872-7

9 789939 118727

Պատրաստություն եւ հրատարակություն՝

ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակի

Բովանդակություն

Ներածություն 1

Վերադարձի իրավունքի իրավաքաղաքական հենքը 1

Արցախցիների վերադարձի իրավունքի խնդրի միջազգային արձագանքները 4

Արդարադատության միջազգային դատարան 4

Պետությունների հավաքական հայտարարություններ 5

Միավորված ազգերի կազմակերպություն 6

Եվրոպական Միություն 7

Եվրոպական խորհրդարան 7

ԵՄ հանձնաժողով եւ խորհուրդ 9

Եվրոպայի խորհուրդ եւ ԵԽ խորհրդարանական վեհաժողով 13

Ավստրալիա 13

Ֆրանսիա 15

Բելգիայի Թագավորություն 17

Միացյալ Թագավորություն 18

Ամերիկայի Միացյալ նահանգներ 18

Կանադա 21

Ռուսաստանի Դաշնություն 22

Իրանի Իսլամական Հանրապետություն 24

Շվեյցարիա 25

Միջազգային եւ այլ կազմակերպություններ 25

Հայաստանի Հանրապետություն 26

Վերջաբան 28

Հավելվածներ 31

Արցախի Հանրապետության նախագահ 31

Արցախ վերադարձը մեր օրակարգում է. դրանով հետաքրքրված են Եվրոպան, ԱՄՆ-ն, ՌԴ-ն, կարծում եմ նաեւ Ադրբեջանը 31

Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանի հարցազրոյցը՝ «Ֆիկառ» օրաթերթին 32

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լուծարելու փաստաթուղթն իրավական ուժ չունի. Արցախի նախագահ 34

Արցախի Հանրապետության Ազգային ժողով 35

Արցախի ԱԺ-ն Երեւանում փակ նիստ է անցկացրել. որոշվել է ձեւավորել հատուկ հանձնախումբ 35

Արցախի Ազգային ժողովը վերահաստատում է իր հանձնառությունը՝ տեր կանգնելու Արցախի ժողովրդի իրավունքներին. հայտարարություն 36

Արցախի Ազգային ժողովի ղեկավար կազմը հանդիպել է Արցախի հարցերով Հանձնախմբի համակարգողի հետ 37

Արցախի եւ Հայաստանի մի շարք քաղաքական ուժերի հայտարարությունը 38

Արցախի ԱԺ խմբակցությունների հայտարարությունը 39

Արցախի ԱԺ-ն դիմել է ՀՀ իշխանություններին, ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին, ՄԱԿ-ին 41

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտե 43

Ստեղծվել է Արցախի ժողովրդի իրավունքների հանձնախումբ, որը կղեկավարի Վարդան Օսկանյանը 43

«Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով ստեղծված հանձնախմբի առաջին հայտարարությունը 44

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախմբի կազմը կընդլայնվի. Հայտարարություն 45

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Եվրոպական խորհրդարանի 12 մարտի, 2024թ. բանաձեւի վերաբերյալ 47

Միջազգային պաշտպանության ներքո արցախահայերի վերադարձը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության բանալին. Վարդան Օսկանյան 48

Խաղաղությունը պահանջում է մարդկային արժանապատվություն, իսկ մարդկային արժանապատվությունը միշտ արմատավորված է մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման մեջ. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբ 50

HRC54 – Համատեղ հայտարարություն Լեռնային Ղարաբաղում իրավիճակի մասին 53

Ներածություն

2020թ. պատերազմից, եւ հատկապես 2023թ. Արցախի հայաթափումից[1] հետո միջազգային եւ հայկական տարբեր շրջանակների, այդ թվում մեր կողմից հաճախ սկսվեց օգտագործվել «վերադարձի իրավունք» ձեւակերպումը: Միջազգային գործուն մեխանիզմների կիրառման պայմաններում արցախցիների վերադարձի իրավունքի իրացումը դարձել է նաեւ ՀՅԴ Հայ դատի առանցքային հանձնախմբերի հիմնական քաղաքական առաջնահերթություններից մեկը:

Սույն զեկույցով ներկայացնում ենք որոշ դրույթներ վերադարձի իրավունքի (Right to Return)՝ միջազգային տարբեր փաստաթղթերով սահմանված իրավաքաղաքական հենքի, ինչպես նաեւ Արդարադատության միջազգային դատարանի, միջազգային կազմակերպությունների եւ մի քանի պետությունների կողմից այդ իրավունքի հիշատակմամբ ընդունված որոշումների, հայտարարությունների եւ բանաձեւերի վերաբերյալ:

Թեեւ Հայաստանի ներկայիս կառավարությունը մինչեւ այս հետազոտության առաջին հրապարակումը (2024թ. մայիս) աշխատում էր Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի ուղղությամբ, վերջին շրջանում կարծես թե փոխել է իր քաղաքականությունը:[2] Այնուամենայնիվ, միջազգային հարաբերությունների մյուս դերակատարները, հատկապես նաեւ Արցախի ժողովրդի՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրված ներկայացուցիչները շարունակում են բարձրաձայնել խնդիրը, հետեւաբար ներկայացնում ենք ուսումնասիրության թարմացված տարբերակը:

Վերադարձի իրավունքի իրավաքաղաքական հենքը

Վերադարձի իրավունքի համար իրավաքաղաքական հենք են հանդիսանում 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (The Universal Decleration of Human Rights)[3], 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (The International Covenant on Civil and Political Rights / ICCP)[4], մասամբ՝ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ

[1] Նկատենք, որ Արցախի հայաթափման ադրբեջանական տեւական ծրագիրը ըստ էության ունեցել է երեք հիմնական փուլեր՝ 1992թ. Շահումյանի շրջանի եւ Կուրի աջափնյակի հայության տեղահանությունը, ապա 2020-ին Հադրութի եւ Շուշիի շրջանների հայության տեղահանությունը, իսկ հիմնական փուլը 2023թ. ցեղասպանական գործողությունները:

[2] «Իրատեսական չէ եւ հակասում է ՀՀ պետական շահերին. Փաշինյանն անդադարձել է ԼՂ բնակչության վերադարձի շուրջ առկա որոշ ձեւակերպումներին» https://armenpress.am/hy/article/1198720

[3] https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights

[4] https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights

կոնվենցիան (Convention Relating to the Status of Refugees)[5], ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի՝ 1948թ. թիվ 194 բանաձեւը (United Nations General Assembly Resolution 194 (III) of 11 December 1948)[6], ինչպես նաեւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի վերաբերյալ ՄԱԿ մարդու իրավունքների հանձնախմբի մեկնաբանությունները (The Human Rights Committee General Comment on Article 12 of the International Covenant on Civil and Political Rights. November 1999)[7]: Նախ նկատենք, որ վերադարձի իրավունքն ըստ էության ազատ տեղաշարժի իրավունքին առնչակից իրավունք է՝ միջազգային հստակ պաշտպանությամբ:

Օրինակ "Human Rights Watch" իրավապաշտպան կազմակերպությունը վերադարձի իրավունքի իրացման անհրաժեշտությամբ հանդես է եկել Գվատեմալայի, Էլ Սալվադորի, Հոնդուրասի, Մալավիի, Բիրմայի, Մավրիտանիայի սահմանային ճշգրտումների ժամանակ եւ Բոսնիայի, Խորվաթիայի, Կոսովոյի, Արեւելյան Թիմորի, Եթովպիայի/Էրիթրեայի հակամարտությունների ժամանակ:

Վերադարձի իրավունքի իրացումը շարունակապես կարեւորվում է նաեւ Մերձավոր Արեւելքի հակամարտությունների, հատկապես իսրայելապաղեստինյան նախկին ու հընթացս հակամարտության պայմաններում[8]:

Իր հերթին միջազգային հանրությունը կոնվենցիոնալ պարտավորություններ ունի ապահովելու եւ երաշխավորելու վերադարձի իրավունքի իրացումը՝ այդ թվում միջազգային գործուն մեխանիզմների կիրառմամբ:

Ստեղծված իրավիճակում մեր խնդիրն է եւ՛ քաղաքական, եւ՛ իրավական, եւ՛ փորձագիտական մակարդակներում վերադարձի իրավունքի իրացման միջազգային խոսույթում արմատավորել արցախցիների վերադարձի իրավունքի պաշտպանության խնդիրը:

Վերադառնալով խնդրի իրավաքաղաքական հենքին, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է. **«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ նաեւ սեփականը, եւ վերադառնալու իր երկիրը»**:

Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը սահմանում է[9].

---

[5] https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-relating-status-refugees
[6] https://www.un.org/unispal/document/auto-insert-183290/
[7] https://www.refworld.org/legal/general/hrc/1999/en/46752
[8] https://www.hrw.org/legacy/campaigns/israel/return/#
[9] https://www.gov.am/u_files/file/kron/1%20CivilPolitConvention%20-%20pashtonakan.pdf

1. Որեւէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք եւ բնակության վայր ընտրելու ազատություն:

2. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի լքել ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որեւէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար, եւ համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

Այստեղ կարեւոր է անդրադառնալ սույն հոդվածի վերաբերյալ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի մեկնաբանություններին, որոնք հանգում են 12-րդ հոդվածի 4-րդ ենթահոդվածի կիրառման գրեթե բացարձակ բնույթին եւ դրա կաշկանդված չլինելուն նույն հոդվածի առաջին ենթահոդվածներով:

“Human Rights Watch”-ը ուշագրավ դիտարկման է արժանացրել 1955 թ. «Նոթեբոմի գործը» (Լիխտենշտեյնն ընդդեմ Գվատեմալայի)[10], որտեղ տեղ գտած իրավական վերլուծությունները, որպես նախադեպային որոշման տարրեր, կարող են հետաքրքիր լինել խնդրո առարկա հարցի լուսաբանման համատեքստում: Մասնավորապես, ի թիվս այլնի Արդարադատության միջազգային դատարանն այս գործով նկատել է, որ «արդյունավետ կապը» թույլ է տալիս իրենց երկրից դուրս գտնվողներին վերադառնալ, նույնիսկ եթե նրանք ծնվել են այլ վայրում եւ առաջին անգամ են մտնելու {հայրենի երկիր}, քանի դեռ նրանք պահպանել են «իսկական եւ արդյունավետ կապ» {հայրենի} երկրի հետ:

Իրական եւ արդյունավետ կապը, որը հիմք է հանդիսանում վերադարձի իրավունքի համար, կարող է ժամանակի ընթացքում անհետանալ: Այնուամենայնիվ, դա չի տարածվում բռնի տեղահանվածների վրա: «Իրավունքի անհետացման որոշում» չի կարող է կայացվել այն անձանց համար, ովքեր հնարավորություն չեն ունեցել օգտագործելու վերադարձի իրավունքը: Փախստականների՝ կամովին կամ հարկադիր հեռացման փաստը, չի ազդում վերադարձի իրավունքի վրա: Փախստականի

[10] https://icj-cij.org/case/18

կարգավիճակի առկայությունն էլ, բնականաբար, վերադարձի իրավունքի իրացման սահմանափակում հանդիսանալ չի կարող[11]:

Մարդու իրավունքների միջազգային կարգավորումները, ինչպես նաեւ փախստականների իրավունքների միջազգային կարգավորումները «համատեղ» ամրապնդում են վերադարձի իրավունքը: Փախստականների մասին միջազգային իրավունքը հաստատում է վերադառնալու իրավունքը՝ շեշտը դնելով կամավոր հայրենադարձության վրա՝ որպես փախստականների խնդրի նախընտրելի կայուն լուծում: Դրա հիմքը կարելի է գտնել Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայում[12] (այսուհետ՝ կոնվենցիա) եւ դրա 1967 թ. արձանագրությունում[13]:

Հետաքրքիր է նկատել, որ վերադարձի իրավունքը կանոնակարգող միջազգային ակտերը կարծես թե նպատակադրված ավելի շատ շեշտում են «երկիր», «սեփական երկիր» հասկացությունները քան «պետություն» եզրույթը:

Արցախցիների վերադարձի իրավունքի խնդրի միջազգային արձագանքները

Ինչպես 2020 թ. պատերազմից, այնպես էլ 2023 թ. Արցախի հայաթափումից հետո, միջազգային խոսույթում արցախցիների վերադարձի իրավունքի վերաբերյալ տեղի են ունեցել բազմաթիվ հիշատակություններ, որոնք կարեւոր են այս իրավունքի իրացման վերաբերյալ աշխատանքները զարգացնելու, այն միջազգային հարաբերություններում քննարկման առարկա դարձնելու տեսանկյունից: Ստորեւ անդրադառնանք այդպիսի հիշատակումներին՝ մի շարք պետությունների եւ միջազգային կազմակերպությունների օրինակներով:

Արդարադատության միջազգային դատարան

Կարեւոր է Արդարադատության միջազգային դատարանի կողմից 2023 թ. նոյեմբերի 17-ի որոշումը[14], որը կայացվեց Հայաստանի միջնորդությամբ Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի ներքո քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական գործի շրջանակներում:

Որոշման մեջ Դատարանը մասնավորապես նշել է, որ «Միավորված ազգերի

[11] The Human Rights Committee General Comment on Article 12 of the ICCPR (Right to Return - Human Rights Watch Policy Page) (hrw.org)
[12] https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-relating-status-refugees
[13] https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-relating-status-refugees
[14] https://icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231117-ord-01-00-en.pdf

կազմակերպության զեկույցների համաձայն՝ ավելի քան 100.000 հայազգի կամ էթնիկ ծագում ունեցող անձինք ստիպված են եղել լքել իրենց բնակության վայրը եւ հասնել Հայաստանի սահման՝ 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում սկսված գործողությունից հետո, ինչին հաջորդել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ամբողջական վերահսկողության վերահաստատումը»[15]: Համաձայն Դատարանի՝ այդ գործողությունը «տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի բնակչության խոցելիության եւ սոցիալական անկայուն իրավիճակի տեւական ազդեցության պայմաններում: Լաչինի միջանցքով Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ կապի երկարատեւ խափանումը լրջագույնս ազդել էր այս շրջանի բնակիչների վրա, ինչը խոչընդոտել է Լեռնային Ղարաբաղում հոսպիտալացված՝ ազգային եւ էթնիկ ծագումով հայերի՝ շտապ բուժօգնություն ստանալու նպատակով տեղափոխումը Հայաստանի բժշկական հաստատություններ: Խոչընդոտներ են եղել նաեւ Լեռնային Ղարաբաղ առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման համար՝ պատճառ դառնալով սննդի, դեղորայքի եւ կյանք փրկող այլ բժշկական պարագաների պակասի»:

Որոշման գործառնական մասով, ի հավելումն Ադրբեջանի ստանձնած միակողմանի հանձնառությունների եւ Դատարանի բազմաթիվ այլ պարտադրումների, վերջինս Ադրբեջանին նաեւ պարտավորեցրել է «(ա) ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր լքել են Լեռնային Ղարաբաղը 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո, եւ ովքեր ցանկանում են վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, կարողանան դա անել անվտանգ, անարգել եւ արագորեն, (բ) ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր մնացել են Լեռնային Ղարաբաղում 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո, եւ ովքեր ցանկանում են հեռանալ, կարողանան դա անել անվտանգ, անարգել եւ արագորեն, (գ) ապահովել, որպեսզի այն անձինք, ովքեր մնացել են Լեռնային Ղարաբաղում 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո կամ վերադարձել են Լեռնային Ղարաբաղ, եւ ովքեր ցանկանում են մնալ, զերծ լինեն ուժի կիրառումից կամ ահաբեկումից, որը կարող է նրանց փախուստի պատճառ դառնալ»[16]:

Պետությունների հավաքական հայտարարություններ

2023 թ. հոկտեմբերի 5-ին, Գրանադայի քառակողմ հանդիպումից հետո (Հայաստան-Ֆրանսիա-Գերմանիա-ԵՄ) ընդունված հայտարարության մեջ նույնպես հղում կա վերադարձի իրավունքին. «Փախստականները պետք է ազատորեն օգտվեն իրենց տներ եւ բնակության վայրեր վերադառնալու իրավունքից՝ առանց որեւէ

[15] https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231117-ord-01-00-en.pdf
[16] https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/11/18/mfa_statement/12346

պայմանների, միջազգային մոնիտորինգի ներքո եւ իրենց պատմության, մշակույթի եւ մարդու իրավունքների նկատմամբ պատշաճ հարգանքով»[17]:

2023 թ. հոկտեմբերի 11-ին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Ֆրանսիայի ներկայացրած համատեղ հայտարարությանն են միացել Հայաստանը, ԱՄՆ-ն, Անդորրան, Արգենտինան, Ավստրալիան, Ավստրիան, Բելգիան, Բուլղարիան, Կանադան, Խրվաթիան, Կիպրոսը, Չեխիան, Դանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Գերմանիան, Հունաստանը, Իսլանդիան, Իռլանդիա, Ճապոնիան, Լատվիան, Լիխտենշտեյնը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Մարշալյան կղզիները, Հյուսիսային Մակեդոնիան, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Իսպանիան, Սլովակիան, Սլովենիան, Շվեդիան, Շվեյցարիան, Միացյալ Թագավորությունը եւ Ուրուգվայը: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Այս պահին մենք Ադրբեջանին կոչ ենք անում ապահովել Լեռնային Ղարաբաղի այն հայերի իրավունքներն ու անվտանգությունը, ովքեր մնացել են, եւ անհապաղ պայմաններ ստեղծել տուն գնալ ցանկացողների կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար»[18]:

Այս հայտարարությունների տակ ստորագրել են Եվրոպական միության խորհրդի նախագահը եւ 30-ից ավելի եվրոպական երկրներ, այդ թվում ԵՄ անդամ երկրներ: Հայտարարություններն ստորագրել է նաեւ Հայաստանի Հանրապետությունը:

Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ի տարբեր մարմիններ նույնպես անդրադարձել են արցախահայության վերադարձի իրավունքին առնչվող խնդրին: Այսպես, 2023 թ. հոկտեմբերին ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի հատուկ խորհրդական Ալիս Վաիրիմու Նդերիտուն ասել է. «Կոչ եմ անում բոլոր ջանքերը գործադրել՝ ապահովելու տարածքում մնացած էթնիկ հայ բնակչության պաշտպանությունն ու մարդու իրավունքները, ինչպես նաեւ նրանց, ովքեր հեռացել են, ներառյալ վերադարձի իրավունքը, որը պետք է առաջնահերթություն լինի»[19]: Մինչ այդ, սեպտեմբերի վերջին նման հայտարարություններ են արել ներկայումս ՄԱԿ մարդու իրավունքների բարձր հանձնակատար Վոլքեր Թուրքը20, եւ նույն խորհրդի հատուկ զեկուցող Մորիս Թիդբաս-

[17] https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/10/05/Nikol-Pashinyan-quadrilateral-meeting-announcement/

[18] https://switzerland.mfa.am/en/news/2023/10/11/hrc54-%E2%80%93-joint-statement/12149 , հայերեն թարգմանությունը՝ այս փաստաթղթի Հավելվածներ բաժնում:

[19] https://www.arabnews.com/node/2389056/world

[20] https://www.ohchr.org/en/statements-and-speeches/2023/09/azerbaijan-armenia-comment-un-human-rights-chief-volker-turk

Բինցը[21]:

Եվրոպական Միություն

Եվրոպական խորհրդարան

Անցնող երեք տարիների ընթացքում, Եվրոպական խորհրդարանը շուրջ մեկ տասնյակի հասնող տարբեր բնույթի բանաձեւերի ընդունմամբ անդրադարձել է արցախցիների վերադարձի իրավունքին:

Մասնավորապես, Եվրոպական խորհրդարանի կողմից 2021 թ. մայիսի 20-ին ընդունված «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջին հակամարտության հետեւանքով ռազմագերիների մասին» բանաձեւով[22]՝ Խորհրդարանը մասնավորապես «ընդգծում է հրատապ անհրաժեշտությունը՝ ապահովելու, որ մարդասիրական օգնությունը հասնի կարիքավորներին, որ ապահովվի Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության եւ նրա մշակութային ժառանգության անվտանգությունը, եւ որ ներքին տեղահանվածներն ու փախստականները կարողանան վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը»:

2023թ. հունվարի 18-ին Եվրոպական խորհրդարանն ընդունել է 2022թ. ընդհանուր արտաքին եւ անվտանգային քաղաքականության տարեկան զեկույցը[23], որտեղ Խորհրդարանը գտնում է, որ խաղաղության պայմանագիրը «պետք է անդրադառնա հակամարտության բոլոր հիմնական պատճառներին, ներառյալ Լեռնային Ղարաբաղում ապրող հայ բնակչության իրավունքներին ու անվտանգությանը, տեղահանվածների եւ փախստականների վերադարձին իրենց տները՝ ՄԱԿ-ի գրասենյակի վերահսկողության ներքո»:

2023թ. մարտի 15-ին Եվրոպական խորհրդարանն ընդունել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ[24] եւ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ[25] առանձին զեկույցները: Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի մասին հիշատակումներ կան երկու զեկույցներում էլ:

Հայաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ զեկույցում Խորհրդարանը «Երկու երկրների կառավարություններին կոչ է անում ամբողջությամբ ներգրավվել

---

[21] https://news.un.org/en/story/2023/09/1141577
[22] Texts adopted - Prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan - Thursday, 20 May 2021 (europa.eu)
[23] European Parliament resolution of 18 January 2023 on the implementation of the common foreign and security policy — annual report 2022 (2022/2048(INI)) (europa.eu)
[24] Texts adopted - EU-Armenia relations - Wednesday, 15 March 2023 (europa.eu)
[25] Texts adopted - EU-Azerbaijan relations - Wednesday, 15 March 2023 (europa.eu)

համապարփակ եւ փոխընդունելի խաղաղության պայմանագրի մշակմանը, որը պետք է անդրադառնա Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության անվտանգությանը, ներքին տեղահանվածների եւ փախստականների վերադարձին եւ մշակութային, կրոնական, ու պատմական ժառանգության պաշտպանվածությանը»:

Ադրբեջանի հետ հարաբերությունների վերաբերյալ բանաձեւում Խորհրդարանը «վերահաստատում է, որ համապարփակ խաղաղության պայմանագիրը արդյունավետ լինելու համար պետք է ներառի դրույթներ, որոնք երաշխավորում են Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Լեռնային Ղարաբաղում եւ հակամարտությունից տուժած այլ շրջաններում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը, ինչպես նաեւ արագ եւ անվտանգ վերադարձը»:

Արցախի հայաթափումից հետո, 2023 թ. հոկտեմբերի 5-ին Եվրոպական խորհրդարանն ընդունել է «Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի հարձակումից հետո ստեղծված իրավիճակի եւ Հայաստանի դեմ շարունակվող սպառնալիքների վերաբերյալ» բանաձեւ[26], որտեղ կատարվածն ըստ էության որակվում է էթնիկ զտում՝ համաձայն ՄԱԿ Անվտանգության խորհրդի սահմանումների: Վերադարձի իրավունքի մասով նշված է. «Լեռնային Ղարաբաղի հայերն իրավունք ունեն արժանապատիվ եւ ապահով ապրել իրենց տներում»:

Եվրոպական խորհրդարանը 2024 թ. փետրվարի 28-ի լիագումար նիստի ընթացքում ընդունել է 2023 թ. ԵՄ ընդհանուր արտաքին եւ անվտանգության քաղաքականության[27], ինչպես նաեւ ԵՄ պաշտպանական եւ անվտանգության ընդհանուր քաղաքականության[28] վերաբերյալ տարեկան զեկույցները: Դրանցում ծավալուն եւ կարեւոր անդրադարձներ կան ղարաբաղյան հիմնախնդրի ներկա հանգրվանի վերաբերյալ[29]: ԵՄ ընդհանուր արտաքին եւ անվտանգության քաղաքականության իրականացման տարեկան զեկույցում Ադրբեջանի իշխանություններին կոչ է արվում թույլատրել հայ բնակչության անվտանգ վերադարձը Լեռնային Ղարաբաղ եւ ամուր երաշխիքներ տալ նրանց իրավունքների պաշտպանության հարցում:

Մինչ օրս վերջին անգամ Եվրոպական խորհրդարանը արցախահայության վերադարձի իրավունքին անդրադարձել է 2024թ. մարտի 13-ին ընդունված «Եվրոպական միության եւ Հայաստանի միջեւ կապերի սերտացման եւ Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ խաղաղության համաձայնագրի անհրաժեշտության մասին»[30] բանաձեւով:

---

[26] https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356_EN.html
[27] https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2024-0104_EN.html
[28] https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2024-0105_EN.html
[29] https://www.ancnews.info/?p=22155
[30] https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2024-0163_EN.html

Վերադարձի իրավունքի վերաբերյալ՝ Խորհրդարանը «Ադրբեջանին կոչ է անում անկեղծորեն ներգրավվել Ղարաբաղի հայերի հետ համապարփակ եւ թափանցիկ երկխոսության մեջ՝ ապահովելու նրանց իրավունքների նկատմամբ հարգանքը եւ երաշխավորելու նրանց անվտանգությունը, ներառյալ միջազգային ներկայության ներքո իրենց տները արժանապատիվ եւ ապահով կերպով վերադառնալու եւ իրենց տներում ապրելու իրավունքը, մուտք գործելու իրենց հողը եւ {պաշտպանելու} սեփականության իրավունքը, պահպանելու իրենց հատուկ ինքնությունը եւ լիարժեք օգտվելու իրենց քաղաքացիական, մշակութային, սոցիալական եւ կրոնական իրավունքներից»:

ԵՄ հանձնաժողով եւ խորհուրդ

Ինչ վերաբեում է Եվրոպական միության իշխանության գործադիր թեւին, ապա վերջինս, ի դեմս Եվրոպական խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի եւ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության, բազմիցս անդրադարձներ է կատարել Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքին:

2023թ. սեպտեմբերի 22-ին արտաքին գործողությունների եվրոպական ծառայության ղեկավար, ԵՄ արտաքին եւ անվտանգային քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված իր խոսքում վերադարձի իրավունքի վերաբերյալ մասնավորապես նշել է. «Ադրբեջանը պատասխանատվություն է կրում ապահովելու Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության լիարժեք հարգանքը... ներգրավվել Ղարաբաղի հայերի հետ համապարփակ եւ թափանցիկ երկխոսության մեջ՝ ապահովելու նրանց իրավունքները եւ անվտանգությունը, ներառյալ՝ իրենց տներում արժանապատիվ ապրելու իրավունքը»[31]:

Արտաքին եւ անվտանգային քաղաքականության հարցերով Եվրոպական հանձնաժողովի խոսնակ Պետեր Ստանոն 2023 թ. նոյեմբերի 17-ին, ի պատասխան Արմենպրեսի հարցումների, հայտարարել է. «Մենք շատ հստակ պահանջում ենք, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ապահով վերադարձի երաշխիքներ ունենա: Գիտեք, նրանց ունեցվածքը չի կարող վերաբնակեցվել կամ բռնագրավվել ուրիշի կողմից: Պետք է երաշխիքներ լինեն այդ մարդկանց անվտանգ վերադարձի համար, եթե նրանք որոշեն: Մենք պետք է դիվանագիտական եւ քաղաքական միջոցներ օգտագործենք միջազգային հարթակներում եւ միջազգային գործընկերների հետ համագործակցության միջոցով, որպեսզի համոզվենք, որ կան բավարար երաշխիքներ, որպեսզի մարդիկ, եթե այդպես

[31] https://www.eeas.europa.eu/eeas/azerbaijan-address-high-representative-josep-borrell-un-security-council-nagorno-karabakh_en?s=177

որոշեն, կարողանան վերադառնալ իրենց տները»[32]:

Այս հայտարարությունից երկու օր անց, նոյեմբերի 19-ին Հարավային Կովկասում եւ Վրաստանի ճգնաժամի հարցով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Տոիվո Կլաարն է խոսել արցախահայության վերադարձի իրավունքի մասին՝ կարեւորելով Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչների՝ իրենց տները անվտանգ վերադառնալու առանցքային անհրաժեշտությունը: Նա պնդել է, որ ԵՄ-ն քաջալերում է, որ տեղահանվածները ապահով եւ անվտանգ վերադառնան, եթե նրանք ցանկանան, եւ որ պետք է պայմաններ ստեղծվեն նրանց վերադարձը հեշտացնելու համար[33]:

2023թ. սեպտեմբերի 29-ին, արցախահայերի վերադարձի իրավունքի արձանագրմամբ, հայտարարություն է արել նաեւ Հայաստանում Եվրոպական միության առաքելությունը: Հայտարարության՝ վերադարձի իրավունքին վերաբերող հատվածը հետեւյալն է. «Ադրբեջանը պատասխանատվություն է կրում ապահովելու ղարաբաղցի հայերի իրավունքներն ու անվտանգությունը, ներառյալ՝ առանց ահաբեկման եւ խտրականության իրենց տներում արժանապատիվ ապրելու, ինչպես նաեւ տեղահանվածների վերադարձի իրավունքը: Կարեւոր է, որ ՄԱԿ-ի առաքելությունը կարողանա մուտք գործել տարածք հաջորդ օրերի ընթացքում»[34]:

2023 թ. հոկտեմբերի 3-ին առողջապահության եւ սննդի անվտանգության հարցերով ԵՄ հանձնակատար Ստելլա Կիրիակիդեսը, Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում ելույթ ունենալով ԵՄ արտաքին քաղաքականության ու անվտանգության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի անունից, հայտարարել է. «Նրանց, ովքեր փախել են Հայաստան, անհրաժեշտ է, որպեսզի կարողանան ապահով վերադառնալ իրենց տները: Նրանց մշակութային ժառանգությունն ու սեփականության իրավունքները նույնպես պետք է ապահովվեն ու պաշտպանվեն Ադրբեջանի կողմից»[35]:

Վերը նշված 2023 թ. հոկտեմբերի 11-ին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Ֆրանսիայի ներկայացրած համատեղ հայտարարությունն ստորագրած քառասուն պետություններից քսանչորսը Եվրոպական Միության, հետեւաբար նաեւ ԵՄ խորհուրդի անդամ են: Հիշյալ հայտարարությունը չեն ստորագրել միայն Հունգարիան, Իտալիան եւ

---

[32] https://armenpress.am/eng/news/1124344.html
[33] https://armenpress.am/arm/news/1124489.html
[34] https://www.eeas.europa.eu/delegations/armenia/azerbaijan-statement-spokesperson-displacement-people-nagorno-karabakh_en
[35] https://www.eeas.europa.eu/eeas/nagorno-karabakh-speech-high-representativevice-president-borrell-ep-plenary_en

Ռումինիան:

ԵՄ Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը 2023թ. դեկտեմբերի 12-ին կրկին անդրադարձել է վերադարձի իրավունքին՝ նշելով «ԵՄ-ն Ադրբեջանին կոչ է արել ապահովել ղարաբաղցի հայերի իրավունքներն ու անվտանգությունը, ներառյալ տեղահանվածների վերադարձի իրավունքը, եւ թույլ տալ միջազգային մշտական մշտադիտարկում տեղում ՝ ի լրումն ՄԱԿ-ի առաքելության այցելությունների[36]»:

2024թ. մարտի 4-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում ԵՄ ներկայացուցիչը, ի թիվս այլնի, հայտարարել է. «ԵՄ-ն հավասարապես ընդգծում է Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության ապահովման, ինչպես նաեւ փախստականների եւ տեղահանվածների՝ Լեռնային Ղարաբաղ կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ իրենց տներում արժանապատվ, առանց ահաբեկման կամ խտրականության նրանց ապրելու իրավունքը: Բացի այդ, տեղական բնակչության մշակութային ժառանգությունը եւ սեփականության իրավունքները պետք է արդյունավետ պաշտպանվեն եւ երաշխավորվեն»[37]:

ՄԱԿ-ի Ժնեւի գրասենյակում եւ միջազգային այլ առաքելություններում հավատարմագրված Եվրոպական միության առաքելությունը 2024 թ. իր առաջնահերթությունների ցանկում 18-րդ կետով նշել է նաեւ Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի իրացումը. «ԵՄ-ն կընդգծի Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության ապահովման կարեւորությունը, ինչպես նաեւ պայմանների ստեղծումը փախստականների եւ տեղահանվածների Լեռնային Ղարաբաղ կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար, մասնավորապես՝ իրենց տներում նրանց արժանապատիվ, առանց ահաբեկման կամ խտրականության ապրելու իրավունքը»[38]:

2024 թվականի հունիսի 19-ին ԵՄ Հանձնաժողովի անունից ԵՄ բարձր ներկա-յացուցիչ Ժոզեպ Բորելը գրավոր պատասխան է տվել մի խումբ պատգամավորների հարցին՝ որեւէ կոնկրետ քայլի վերաբերյալ, որ «ԵՄ-ն մտադիր է ձեռնարկել Ադրբեջանում կալանավորված բոլոր հայերի անհապաղ ազատումն ու հայրենադարձումն ապահովելու համար» : Ժ. Բորելը իր պատասխանում մասնավորապես նշում է. «ԵՄ-ն շարունակում է կոչ անել Ադրբեջանին ապահովել ղարաբաղցի հայերի իրավունքները, ներառյալ՝ առանց

[36] https://www.europarl.europa.eu/doceo/document/E-9-2023-002830-ASW_EN.pdf
[37] https://www.eeas.europa.eu/delegations/un-geneva/hrc55-item-2-general-debate-oral-update-high-commissioner-eu-statement_en
[38] https://www.eeas.europa.eu/delegations/un-geneva/council-conclusions-eu-priorities-un-human-rights-fora-2024-0_en?s=62

ահաբեկման եւ խտրականության իրենց տները վերադառնալու իրավունքը»[39]:

2024 թվականի օգոստոսի 4-ին հրապարակված հարցազրույցում Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը, պատասխանելով «Հայաստանում գտնվող տեղահանված ղարաբաղցի հայերի մասին հարցին, որոնցից շատերը դեռ հույս ունեն մի օր վերադառնալ տուն » նշել է. «ԵՄ-ն շատ պարզ է եղել այս հարցում, եւ դա նաեւ իմ ակնկալիքն է, որ Ղարաբաղի հայերը կմասնակցեն կարգավորման գործընթացին, եւ որ Բաքվի եւ նրանց միջեւ ուղիղ բանակցություններ կլինեն իրենց հայրենի տարածաշրջան անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի շուրջ: Նման ապագայի պարամետրերն ու պայմանները պետք է գտնել եւ համաձայնեցնել ներառական եւ փոխադարձ հարգանքով երկխոսության միջոցով: Նորմալացումն ինձ համար նշանակում է բաց վերքեր չունենալ, եւ, հետեւաբար, այս հարցը պետք է լինի ավելի լայն խաղաղ գործընթացի մաս: Երբեմն այս համատեքստում արծարծվում են այլ հարցեր, ինչպես, օրինակ, այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» հարցը: Ինձ համար սրանք բոլորովին տարբեր հարցեր են, որոնք հնարավոր չէ խառնել: Առաջինը ղարաբաղցի հայերի՝ իրենց պապենական օջախներ վերադարձի դյուրացումն է, ինչը Ադրբեջանի պարտավորությունն է: Երկրորդը Ադրբեջանի այլ շրջաններում, այդ թվում՝ Բաքվում ապրած հայերի, կամ Հայաստանում ապրած ադրբեջանցիների հարցն է: Բնականաբար, նրանք պետք է նաեւ կարողանան այցելել այն վայրերը, որտեղ իրենք կամ իրենց ընտանիքները ապրել են, կամ նույնիսկ վերադառնալ այնտեղ, եթե ցանկանան, եւ դա նույնպես պետք է լինի նորմալացման հետեւանք, բայց դա բոլորովին տարբեր է Ղարաբաղի հայերի կոնկրետ խնդրից»[40]:

2024 թվականի սեպտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 57-րդ նստաշրջանի ժամանակ Եվրոպական միության մշտական ներկայացուցիչ դեսպան Լոտտե Կնուդսենը նշում է.

«ԵՄ-ն ողջունում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի գրասենյակի երկու թիմերի տեղակայումը Հայաստանում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների եւ փախստականների իրավիճակի մասին տեղեկություններ հավաքելու նպատակով: Մենք գրասենյակին կոչ ենք անում շարունակել զբաղվել այս հարցով: ԵՄ-ն ընդգծում է իր շարունակական աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն եւ վերջնական խաղաղության հաստատմանը, որը հիմնված է ինքնիշխանության, սահմանների անձեռնմխելիության եւ տարածքային ամբողջակա-նության ճանաչման սկզբունքների վրա՝ համաձայն 1991թ. Ալմա Աթայի հռչակագրին

[39] https://www.europarl.europa.eu/doceo/document/E-9-2024-001345-ASW_EN.html
[40] https://jam-news.net/toivo-klaar-on-the-south-caucasus-problems-and-conflicts/

իրենց հանձնառության: Արդարադատության միջազգային դատարանի հրամանները չափազանց կարեւոր են: Տեղի բնակչության մշակութային ժառանգությունը եւ սեփականության իրավունքները, ինչպես նաեւ նրանց վերադարձի իրավունքը պետք է արդյունավետորեն պաշտպանվեն եւ երաշխավորվեն»[41]:

Եվրոպայի խորհուրդ եւ ԵԽ խորհրդարանական վեհաժողով

Եվրոպայի խորհուրդը եւ դրա տարբեր կառույցներ մի շարք առիթներով բարձրաձայնել են արցախահայերի վերադարձի իրավունքի իրացման անհրաժեշտության մասին: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) Լեռնային Ղարաբաղում հումանիտար վիճակի վերաբերյալ 2023թ. հոկտեմբերի 12-ին որդեգրել է թիվ 2260 (2023) հանձնարարականը,[42] որը վերադարձի հարցով ասում է. «Վեհաժողովը պահանջում է, որ Գլխավոր քարտուղարը եւ Նախարարների կոմիտեն ամեն ինչ անեն՝ հնարավորինս արագ կազմակերպելու Եվրոպայի խորհրդի փաստահավաք առաքելություն Ադրբեջան՝ նպատակ ունենալով գնահատել եւ նախանշել այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն այս շրջանի հայերի իրավունքների պաշտպանության համար, այդ թվում՝ նրանց, ովքեր ապաստան են գտել երկրից դուրս եւ ապահովել անվտանգ վերադարձը նրանց, ովքեր ցանկանում են դա անել»: Նույն նիստին, ԵԽԽՎ-ն որդեգրել է նույն խորագրով իր թիվ 2517 (2023) բանաձեւը[43], որտեղ հինգ անգամ նշվում են արցախցիների վերադարձը իրականացնելու համար Ադրբեջանի պարտավորությունները:

Նաեւ հիշատակման են արժանի ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միտովիչի 2024 թ. հունվարի 12-ի դիտակումները[44], որոնք վերջինս կատարել է նախորդ տարվա հեկտեմբերին տարածաշրջան կատարած այցից հետո:

Ավստրալիա

Ավստրալիան 2023 թ. հոկտեմբերի 11-ի համատեղ հայտարարության ստորագրող կողմ է, որով Ադրբեջանին կոչ է արվում ապահովել Լեռնային Ղարաբաղի այն հայերի իրավունքներն ու անվտանգությունը, ովքեր մնացել են եւ անհապաղ պայմաններ ստեղծել կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար, նրանք

[41] https://www.eeas.europa.eu/delegations/un-geneva/hrc57-item2_en?s=62
[42] https://pace.coe.int/en/files/33146/html
[43] https://pace.coe.int/en/files/33145/html
[44] https://www.coe.int/en/web/commissioner/-/armenia-and-azerbaijan-effective-human-rights-protection-of-all-persons-affected-by-the-conflict-over-the-karabakh-region-is-key-to-the-success-of-the-peace-process

համար, ովքեր ցանկանում են գնալ տուն»[45]:

2023 թ. սեպտեմբերի 19-ի՝ Ադրբեջանի կողմից Արցախի դեմ 24-ժամյա ռազմական հարձակումից եւ էթնիկ զտումից մեկ տարի անց, Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանականներ Թիմ Ջեյմսը եւ Սյուզան Քարթերն իրենց համապատասխան պալատներում (Օրենսդրական ժողով եւ Օրենսդիր խորհուրդ) ներկայացրել են առանձին միջնորդություններ՝ կոչ անելով ապահովել հայերի վերադարձի իրավունքը Արցախ՝ կիրառելի միջազգային երաշխիքներով, ազատ արձակել բոլոր հայ քաղբանտարկյալներին եւ դադարեցնել տարածաշրջանում կրոնական եւ մշակութային ժառանգության պղծումը, ինչպես նաեւ ավստրալիական կողմին առաջարկել են բոյկոտել COP29-ը[46]:

Սեպտեմբերի 25-ին Նոր Հարավային Ուելսի Օրենսդրական խորհուրդը քննարկեց եւ միաձայն ընդունեց Սյուզան Քարթերի առաջարկը[47], որը նահանգային կառավարության բազմամշակութային հարցերի նախարար Մարկ Բուտիջիգի առաջարկով փոփոխության էր ենթարկվել կողմից:

Ընդունված միջնորդության մեջ մասնավորապես նշված է, որ պալատը.

1. նշում է, որ 2023 թ. սեպտեմբերի 19-ին, տասնամսյա շրջափակումից հետո, Ադրբեջանը փակել է Լաչինի միջանցքը՝ ի հեճուկս Արդարադատության միջազգային դատարանի հրամանների, եւ 24-ժամյա չհրահրված ռազմական հարձակում է իրականացրել Արցախի/Լեռնային Ղարաբաղ դեմ:

2. միանշանակորեն դատապարտում է կայծակնային ռազմական հարձակումը, որը հանգեցրեց մոտ 100.000 բնիկ հայերի բռնի տեղահանմանը իրենց նախնիների հայրենիքից

3. Ադրբեջանին կոչ է անում ենթարկվել Արդարադատության միջազգային դատարանի՝ 2023 թ. նոյեմբերի 17-ին ընդունված ժամանակավոր միջոցներին, որոնք կոչ են անում Արցախից տեղահանված հայերի վերադառնալու իրավունք՝ իրենց անվտանգության եւ իրավունքների կիրառելի միջազգային երաշխիքներով:

4. արձանագրում է տարածաշրջանում շարունակվող լարվածությունը եւ կոչ է անում Ադրբեջանին դուրս գալ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմաններից:

---

[45] https://switzerland.mfa.am/en/news/2023/10/11/hrc54-%E2%80%93-joint-statement/12149
[46] https://www.panorama.am/en/news/2024/09/20/NSW-parliament-Armenia/3055403
[47] https://www.parliament.nsw.gov.au/Hansard/Pages/HansardResult.aspx#/docid/HANSARD-1820781676-97079

5. Ադրբեջանին կոչ է անում ազատ արձակել բոլոր հայ քաղբանտարկյալներին:

6. Ադրբեջանին կոչ է անում դադարեցնել Արցախի քրիստոնեական եւ մշակութային ժառանգության կանխամտածված ոչնչացումը եւ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու բոլոր հնագույն մշակութային եւ պատմական վայրերի պաշտպանությունը:

7. ցավով նշում է, որ այս հակամարտությունն այժմ շարունակվում է մեկ տարի եւ նպաստել է տարածաշրջանում անթիվ մարդկանց տառապանքներին:

8. ողջունում է Ավստրալիայի աջակցությունը 2023 թ. հոկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հիսունչորսերորդ նիստում Լեռնային Ղարաբաղում իրավիճակի վերաբերյալ համատեղ հայտարարությանը, 32 այլ երկրների հետ համատեղ:

9. աջակցում է Ավստրալիայի կառավարության կողմից տրամադրված 500.000 դոլար օժանդակությանը՝ տարածաշրջանից լքած Լեռնային Ղարաբաղի հայերի տառապանքը մեղմելու համար:

10. Ադրբեջանին կոչ է անում երաշխավորել Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքներն ու անվտանգությունը, ներառյալ նրանց, ովքեր կարող են վերադառնալ Հայաստանից:[48]

Ֆրանսիա

Ֆրանսիայի Սենատի կողմից արցախցիների վերադարձի իրավունքի իրացումը կարեւորվել է 2020թ. նոյեմբերի 18-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման անհրաժեշտության վերաբերյալ»[49] եւ 2024թ. հունվարի 17-ին ընդունված մի բանաձեւով, որի վերտառությունը հետեւյալն է. «Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ռազմական հարձակումը եւ ագրեսիան դատապարտելու եւ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ոտնահարման հետագա փորձերը կանխելու մասին բանաձեւ՝ կոչ անելով պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ եւ երաշխավորել հայ բնակչության Լեռնային Ղարաբաղ վերադարձի իրավունքը»[50]:

Առաջին բանաձեւում մասնավորապես ասվում է. «...Խնդրում է կառավարությանը անել հնարավորը՝ ապահովելու, որ քննարկումներն ուղղված լինեն հակամարտության բանակցային եւ տեւական կարգավորմանը՝ ապահովելով 1994 թ. սահմանված սահմանների վերականգնումը, հայ բնակչության անվտանգությունը եւ տեղահան-

[48] Նույն տեղում
[49] https://www.eeas.europa.eu/delegations/un-geneva/council-conclusions-eu-priorities-un-human-rights-fora-2024-0_en?s=62
[50] https://www.senat.fr/tableau-historique/ppr23-157.html

վածների վերադարձի իրավունքը, ինչպես նաեւ հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանումը...»: Երկրորդ բանաձեւում Սենատը «...հիշեցնում է, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգումը, որը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կայուն խաղաղության միակ հնարավոր ճանապարհն է, եւ որ գործող պետությունները պետք է հարգեն եւ պաշտպանեն այս իրավունքը: Հետեւաբար, միջազգային հանրության պարտակա-նությունն է պահանջել, որ Ադրբեջանը անի ամեն ինչ՝ երաշխավորելու հայ բնակչության վերադարձի իրավունքը Լեռնային Ղարաբաղ՝ նրանց անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու հնարավոր պայմաններով»:

Իր հերթին արտգործնախարար Կատրին Կոլոնան 2023թ. հոկտեմբերի 4-ին հայտարարել է. «Այս հարձակումից հետո մոտ 100.000 մարդ փախել է Լեռնային Ղարաբաղից՝ հասնելու Հայաստան՝ Ռուսաստանի մեղսակցության եւ Թուրքիայի աչալուրջ աչքի ներքո: Այս բնակչությունը իրավունք ունի վերադառնալու իրենց հողը, եթե դա նրանց ցանկությունն է: Թեման ներկայացվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին»[51]:

2024 թվականի մայիսի 8-ին Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյեի հետ հարցազրույցում այդ հարցը նույնպես բարձրացվել է : «Եվ կա նաեւ մեկ այլ հարց, որի շուրջ Ֆրանսիան շատ բարձրաձայնում էր. Խոսքը Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին է: Եվ ես հիշում եմ, որ անցյալ հոկտեմբերին, երբ Ֆրանսիայի Սենատում լսումներ եղան, ձեր նախկին արտգործնախարարն ասաց, որ սա հանցագործություն է, որը չի կարող անպատասխան մնալ, եւ Ֆրանսիան պատրաստվում է նախաձեռնել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում նոր բանաձեւ՝ մարդկանց վերադարձի համար պայմաններ ստեղծելու համար, ներառյալ միջազգային խաղաղապահները եւ նրանց իրավունքների ապահովումը: Այսպիսով, անցել է վեց ամիս: Կարո՞ղ եք թարմացնել մինչ այժմ արվածը»: Դեսպանն արձագանքեց. «Կա մեկ դրական զարգացում. Դա այն է, որ մենք ունենք իրավական հիմք քննարկման համար, ոչ միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, նաեւ ցանկացած միջազգային հարթակներում, դա 2023 թվականի նոյեմբերի 17-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումն է, որը ճանաչում է. Լեռնային Ղարաբաղի հայերի վերադարձի իրավունքը: Այնպես որ, սա ամուր եւ օրինական հիմք է, շատ մանրամասն որոշում: Եվ այս որոշումը պարտադիր է: Դա դատարանի կարծիքը չէ. Դա պարտադիր է Արդարադատության միջազգային դատարանի բոլոր անդամների, այդ թվում՝ Ադրբեջանի համար: Ինչ վերաբերում է Անվտանգության խորհրդին, ապա Ֆրանսիան երեք անգամ հրավիրել է

[51] https://www.lcp.fr/actualites/armenie-sahel-catherine-colonna-fait-le-point-sur-les-dossiers-internationaux-devant-les , https://armenpress.am/eng/news/1121779.html

Անվտանգության խորհրդի նիստ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի շուրջ՝ ինչպես շրջափակման ժամանակ, այնպես էլ Ադրբեջանի հարձակումից հետո: Անվտանգության խորհրդում մեկ երկիր, Անվտանգության խորհրդի մեկ մշտական անդամ, ինչպես Ֆրանսիան, կարող է արգելափակել տեքստը, բայց մի երկիր չի կարող տեքստ պարտադրել»[52]:

Դեսպան Դրկոտինյին 2024 թ. հուլիսի 29-ին արձագանքել է Նիդեռլանդներում Ադրբեջանի ներկայացուցչի հայտարարությանը՝ վերջինիս հիշեցնելով ՄՔԴ-ի պարտավորեցնող վճիռները, ներառյալ Լեռնային Ղարաբաղի հայերի վերադարձի իրավունքը: «Պրն. դեսպան, չկա իրավական տերմին «լավ տղաներ», ինչպես նշեցիք: Լեռնային Ղարաբաղի հայերը կրում են Արդարադատության միջազգային դատարանի կողմից ճանաչված իրավունքները՝ սկսած վերադարձի իրավունքից: Իսկ դատարանի վճիռները պարտադիր են»[53]: Դեսպան Դրկոտինյեն X գրառմամբ կրկին անդրադարձել է Արցախի քաղաքացիների վերադարձի իրավունքին. «Չմոռանանք իրենց հողից վտարված Լեռնային Ղարաբաղի հայերի մասին. նրանց վերադարձի իրավունքը հաստատվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից »,- գրել է Դրկոտինյեն 2024 թ. օգոստոսի 15-ին:[54] Դեսպանը կրկնել է իր պնդումը 2024 թվականի սեպտեմբերի 19-ին:[55]

Բելգիայի Թագավորություն

Բելգիայի հասարակական քաղաքական շրջանակներում եւս արցախահայերի վերադարձի իրավունքը բավականաչափ քննարկվում է: Խնդրին անդրադարձել է Բելգիայի Դաշնային խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը, որը 2020 թ. դեկտեմբերի 17-ին ընդունել է բանաձեւ[56], որտեղ ի թիվս այլնի անդրադարձ կա վերադարձի իրավունքին:

2023 թ. հոկտեմբերի 4-ին Բելգիայի Ֆլամանական խորհրդարանն է բանաձեւ ընդունել, որով Եվրոպական հանձնաժողովին կոչ է արել անհրաժեշտ մարդասիրական օգնություն տրամադրել Լեռնային Ղարաբաղի հայ փախստականներին, իսկ Ադրբեջանին կոչ է արել թույլ տալ էթնիկ հայ բնակչությանը անվտանգ վերադառնալ եւ

---

[52] https://www.azatutyun.am/a/32938496.html
[53] https://armenpress.am/hy/article/1196604
[54] https://abcmedia.am/glxavor-noruthyunner/83407/
[55] https://x.com/o_decottignies/status/1836669531944530002?fbclid=IwY2xjawFY5hRleHRuA2FlbQIxMAABHWkmzvSfqbzip7qmrv3MeXfkSBq238YBWQB2HqqzrNaxHm2eG1QS7LdOhg_aem_PcUVviotXj3XgvgmoNh0zw
[56] https://www.lachambre.be/doc/flwb/pdf/55/1597/55k1597010.pdf#search=%22doc%2055%201597/010%20%22

ապրել Լեռնային Ղարաբաղում՝ միջազգային հսկողության ներքո[57]:

Միացյալ Թագավորություն

Միացյալ Թագավորության խորհրդարանի զույգ պալատների առանձին անդամներ ելույթներով շեշտել են արցախցիների վերադարձի իրավունքը: Հարցը բարձրաձայնվել է նաեւ խորհրդարանում կազմակերպված հատուկ քննարկումների ժամանակ[58]: Արցախահայության վերադարձի իրավունքի կարեւորմամբ 2024թ. մարտի 19-ին Վեսթմինսթերյան պալատում տեղի է ունեցել քննարկում՝ «Լեռնային Ղարաբաղի հայ փախստականներին միջազգային աջակցություն»[59] խորագրով:

Ի պատասխան ՄԹ Խորհրդարանի անդամ Էնդրյու Բրիջենի հարցման՝ խորհրդարանական փոխքարտուղար Լեո Դոչերտին (արտաքին, համագործակցության եւ զարգացման նախարարություն) 2024 թ. մարտի վերջին հայտնել է[60], որ Միացյալ Թագավորության կառավարությունը գտնում է, որ Ադրբեջանը պետք է պայմաններ ստեղծի սեպտեմբերյան ռազմական գործողության ընթացքում տեղահանված եւ վերադառնալ ցանկացող էթնիկ հայերի անվտանգ եւ ապահով վերադարձի համար: 2023 թ. նոյեմբերի 9-ին, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ) Միացյալ Թագավորության Փոխդեսպան Դեյդր Բրաունն արել էր նույնիմաստ հայտարարություն:[61]

Ամերիկայի Միացյալ նահանգներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում արցախահայության վերադարձի իրավունքին տարբեր առիթներով անդրադարձել են իշխանության ինչպես գործադիր թեւի ներկայացուցիչները, այնպես էլ օրենսդիր թեւի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Մասնավորապես, ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպան Մայքլ Քարփենթերին 2023 թ. մարտի 10-ին հատրարարել է. «Հայաստան մեկնած Լեռնային Ղարաբաղի բնակիչները պետք է կարողանան վերադառնալ իրենց տները, եթե դա ցանկանան, երբ դա անվտանգ լինի»[62]:

ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Մեթյու Միլլերը 2023 թ. նոյեմբերի 14-ին, ճեպազրույցի ժամանակ, հայտարարել է. «Մենք շարունակում ենք հավատալ, որ

---

[57] https://www.vlaamsparlement.be/nl/parlementaire-documenten/parlementaire-initiatieven/1767556
[58] 2024 թ. հունվարի 10, https://parliamentlive.tv/event/index/ee24ad75-dcc5-4b53-9081-1436ed3f45dd ,
[59] https://researchbriefings.files.parliament.uk/documents/CDP-2024-0059/CDP-2024-0059.pdf
[60] https://en.armradio.am/2024/03/26/azerbaijan-must-create-the-conditions-for-a-safe-and-secure-return-of-armenians-to-nagorno-karabakh-uk-minister-says/
[61] https://www.gov.uk/government/speeches/latest-situation-in-nagorno-karabakh-uk-statement-to-the-osce
[62] https://osce.usmission.gov/on-the-situation-in-nagorno-karabakh-3/

մարդիկ, ովքեր լքել են Լեռնային Ղարաբաղը, իրավունք ունեն վերադառնալ տուն, եթե ցանկանում են դա անել, եւ դա իրավունք է, որը պետք է պահպանվի»[63]:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչ Ալեքսանդր Սոկոլովսկին, Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի 2023թ. նոյեմբերի 15-ի նիստի ժամանակ հայտարարել է. «Ադմինիստրատոր Փաուերը եւ պետքարտուղարի օգնականի պաշտոնակատար Քիմն այնուհետեւ մեկնեցին Ադրբեջան, որտեղ նրանք հանդիպեցին նախագահ Իլհամ Ալիեւին՝ հայտնելու ԱՄՆ խորը մտահոգությունը Ադրբեջանի զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում գործողության վերաբերյալ եւ ճնշում գործադրելու Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի թույլատրի մարդասիրական մուտքը այդ տարածքում օգնության կարիք ունեցող բնակչությանը, պաշտպանի հայկական կրոնական եւ մշակութային վայրերը Լեռնային Ղարաբաղում եւ ցուցադրական քայլեր ձեռնարկի տեղում պայմաններ ստեղծելու համար, որոնք կապահովեն էթնիկ հայերի վստահությունը առ այն, որ նրանք կարող են վերադառնալ[64]:

Արցախահայության վերադարձի իրավունքի մասին 2023թ. նոյեմբերի 15-ին խոսել է նաեւ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Ջեյմս Օ'Բրայենը՝ նշելով, «կայուն վերադարձ, եթե նրանք այդպես ընտրեն՝ երաշխավորված իրենց իրավունքներով եւ անվտանգությամբ»:[65]

Գալով ԱՄՆ Կոնգրեսին՝ սենատորներ Էդ Մարքին, Բիլ Քեսիդին, Գարի Փիթերսը եւ Թոմ Թիլիսը 2024 թ. ապրիլի 4-ին նամակ են տարածել՝ կոչ անելով Բայդենի վարչակազմին ապահովել վերադարձի իրավունքը՝ «...հաշվի առնելով Ադրբեջանի կողմից իրականացված մարդու իրավունքների լուրջ խախտումները՝ մենք նաեւ ձեզ կոչ ենք անում 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը որակել որպես էթնիկ զտում եւ պաշտպանել Լեռնային Ղարաբաղի հայերի՝ միջազգային երաշխիքներով իրենց տները վերադառնալու իրավունքը»:[66]

ԱՄՆ Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի այլ անդամներ նույնպես անդրադարձել են այս խնդրին՝ կենտրոնանալով իրենց պապենական տներ, միջազգային պաշտպանությամբ, արցախահայերի արժանապատիվ վերադարձն ապահովելու մեխանիզմի գործարկման վրա:

---

[63] https://www.state.gov/briefings/department-press-briefing-november-14-2023/#post-500797-ARMAZER
[64] https://www.usaid.gov/news-information/congressional-testimony/nov-15-2023-future-nagorno-karabakh
[65] https://docs.house.gov/meetings/FA/FA14/20231115/116574/HHRG-118-FA14-Wstate-OBrienJ-20231115.pdf
[66] https://anca.org/press-release/senators-urge-administration-to-secure-the-release-of-armenian-pows-and-ensure-artsakhs-right-to-return-as-precondition-for-peace-talks/

Ներկայացուցիչ Ֆրենք Փալոնն ասել է. «Ես չեմ խոսում միայն հատուցումների մասին, ես խոսում եմ այն մասին, որ իրականում կարողանան վերադառնալ եւ ունենալ կյանք, ապահով կյանք Արցախում: Երբ մենք հանդիպում ենք պետդեպարտամենտի եւ մեր ղեկավարների հետ այստեղ՝ Միացյալ Նահանգներում, մենք շեշտում ենք դա»:[67] Սենատոր Մարքին նշել է. «Ես կշարունակեմ աշխատել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի, իրավունքների, ազատությունների ամրապնդման ուղղությամբ, ներառյալ՝ իրենց հայրենիք վերադարձի իրավունքը»:[68] Ներկայացուցիչ Չուն խոստացել է. «Մենք կանենք այն, ինչ կարող ենք, որպեսզի համոզվենք, որ արդարություն կլինի Արցախի ժողովրդի համար, եւ որ մի օր նրանք կարողանան վերադառնալ»:[69]

Սենատոր Էդ Մարքին հանձնառու է եղել «աշխատել աջակցելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքը, իրավունքները, ազատությունները, ներառյալ նրանց հայրենիք վերադառնալու իրավունքների իրացմանը, եւ ապահովել, որ Հայաստանն ունենա այն աջակցությունը, որն անհրաժեշտ է իրեն պաշտպանվելու համար այժմ եւ ապագայում: Ներկայացուցիչ Բրեդ Շերմանը հայտարարել է. «Իսկական արդարությունն այն է, երբ [բռնի տեղահանված հայերը] կարող են վերադառնալ իրենց նախնիների տները, որտեղ ապրել են հազար եւ ավելի տարիներ»:[70]

ԱՄՆ նախագահի թեկնածու Ռոբերտ Քենեդի կրտսերը շեշտել է. «ԱՄՆ կառավարությունը պետք է կազմակերպի եւ մոբիլիզացնի համաշխարհային հանրությունը՝ քայլեր ձեռնարկելու՝ ապահովելու հայերի անվտանգ վերադարձը Արցախ եւ պաշտպանելու նրանց ինքնորոշման իրավունքը»: Նա այնուհետեւ հայտարարել է. «Մենք պետք է հիմա գործենք՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու համար՝ կոչ անելով ազատ արձակել պատանդներին եւ կիրառել պատժամիջոցներ, մինչեւ բնիկ հայերի Արցախ վերադարձի ապահով եւ կենսունակ ճանապարհ ձեռք բերվի»:[71]

Մինչ ԱՄՆ Կոնգրեսի ընտրված անդամները շարունակում են կոչ անել արցախահայության՝ իրենց տները վերադառնալու իրավունքի իրացում[72], 2024 թ. հուլիսի

---

[67] https://anca.org/press-release/anca-welcomes-strong-congressional-support-for-the-safe-return-of-armenians-to-artsakh/
[68] Նույն տեղում.
[69] Նույն տեղում.
[70] https://anca.org/press-release/bipartisan-bicameral-coalition-of-u-s-legislators-call-for-american-leadership-to-secure-justice-for-artsakh-and-the-armenian-genocide/
[71] https://anca.org/press-release/rfk-jr-calls-for-u-s-sanctions-on-azerbaijan-until-the-safe-return-of-armenians-to-artsakh/
[72] https://armenpress.am/hy/article/1195402 , https://anca.org/press-release/u-s-helsinki-commission-hearing-spotlights-azerbaijans-aggression-against-armenia/ , https://www.civilnet.am/en/news/796480/clear-bipartisan-

10-ին, ելույթ ունենալով Հայաստան երկօրյա այցի ավարտին, ԱՄՆ ՄԶԾ ղեկավար Սամանթա Փաուերը ասել է, որ Վաշինգտոնը նաեւ շարունակում է պաշտպանել 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից վերագրավված իրենց հայրենիք անվտանգ վերադառնալու Ղարաբաղի հայերի իրավունքը: «ԱՄՆ-ը միանում է շատերին միջազգային հանրության մեջ եւ կոչ է անում ապահովել այդ անհատների եւ ընտանիքների իրավունքները, որպեսզի նրանք կարողանան կամավոր եւ ապահով վերադառնալ իրենց տուն»[73]: Նրանց հայրենադարձությունը պահանջում է «ներկա հանգամանքների փոփոխություն»[74]:

2024 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի անկախության օրվա նախընտրական հայտարարության մեջ ԱՄՆ նախագահի Դեմոկրատ թեկնածու, ԱՄՆ փոխնախագահ Քամալա Հարիսն իր աջակցությունն է հայտնել «Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի՝ իրենց տները անվտանգ վերադառնալու իրավունքին, որը կարեւոր է հայ ժողովրդի արժանապատվությունը վերականգնելու եւ տարածաշրջանում կայունության համար»[75]:

2024 թ. հոկտեմբերի 3-ին ԱՄՆ Կոնգրեսի վաթսուն անդամներ ստորագրել են երկկուսակցական/ երկպալատ նամակ՝ Ներկայացուցիչների պալատի անդամ Ֆրենկ Փալոնի եւ սենատոր Էդ Մարկիի առաջնորդությամբ՝ ԱՄՆ ղեկավարությանը կոչ անելով COP 29-ին ընդառաջ պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին ռազմական հանցագործությունների, ապօրինի պատանդառության, Հայաստանի ինքնիշխան տարածքի բռնազավթման համար[76]:

Կանադա

Արցախահայության վերադարձի իրավունքի իրացման հարցում հստակ է նաեւ կանադական կողմի դիրքորոշումը: Արտգործնախարար Ջոլին դրա մասին խոսել է Երեւանում 2023 թ. հոկտեմբերի 25-ին, մասնավորապես նշելով. «Կանադան նաեւ կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը հարգել Լեռնային Ղարաբաղից վերջերս

support-for-armenia-in-congress-members-say/ , https://anca.org/press-release/congressman-schiff-seeks-seizure-of-azerbaijani-assets-to-fund-artsakh-revenue-recovery/ , https://anca.org/press-release/u-s-legislators-community-leaders-and-coalition-partners-rally-on-capitol-hill-for-the-return-of-armenians-to-artsakh/ , https://anca.org/press-release/anca-hosting-accountability-2024-a-capitol-hill-gathering-demanding-justice-for-azerbaijans-genocide-of-artsakhs-armenians/

[73] https://news.am/arm/news/833410.html

[74] https://www.azatutyun.am/a/33029950.html

[75] https://armenianweekly.com/2024/09/24/forty-days-from-election-kamala-harris-starts-courting-armenian-american-voters/

[76] https://anca.org/assets/pdf/100324_PalloneMarkey_COP29.pdf , https://www.ancnews.info/?p=22977

տեղահանված հայերի վերադարձի իրավունքը եւ բարեխղճություն դրսեւորել՝ նպաստելու Լեռնային Ղարաբաղ մարդասիրական անարգել մուտքի վերականգնմանը՝ էթնիկ հայերի անվտանգ վերադարձի համար»[77]:

Այս դիրքորոշումը կրկնել է Հայաստանում Կանադայի դեսպանը 2024 թ. հունիսի 27-ին հրապարակված հարցազրույցում: Էնդրյու Թերները, խոսելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի ձեռքբերմանը Կանադայի աջակցության մասին, ասել է. «... եւ այս ամենն, իհարկե, հաշվի առնելով այն սկզբունքները, որոնցից են՝ փախստականների վերադարձի իրավունքները, մշակութային ժառանգությունը պահպանելու իրավունքները: Դրանք, միանշանակ, պետք է հարգվեն՝ որպես այդ գործընթացի մաս»[78]:

2024 թ. սեպտեմբերի 22-ին Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլին հայտարարություն է տարածել «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում Ադրբեջանի ռազմական գործողությունից մեկ տարի անց» վերնագրով , որում նա պնդում է.[79] «Կանադան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային քաղաքական լուծմանը եւ աջակցում է ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության հարգման սկզբունքներին եւ ինքնորոշման իրավունքին՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղության հասնելու բանակցություններում: Սա պետք է ենթադրի հայ խաղաղ բնակիչների վերադարձի անվտանգ եւ արժանապատիվ իրավունքը, երաշխավորի մարդու իրավունքների եւ քաղաքացիական կենսամիջոցների պաշտպանությունը եւ տարածքում հայկական մշակութային ու պատմական վայրերի պահպանումը»:

Ռուսաստանի Դաշնություն

Արցախահայության վերադարձի իրավունքի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնությունից արված հայտարարությունները տարբերվում են այլ երկրների նույնանման հայտարարություններից: Մասնավորապես ռուսական կողմը խոսում է ոչ թե «վերադարձի իրավունքի» մասին, որը միջազգային իրավունքի մաս է, այլ խոսում է «վերադարձի» մասին: Մյուս խնդիրն այն է, որ միայն ռուսական կողմն է ասում (բացի ադրբեջանական կողմից), որ հայերն Արցախը լքել են կամավոր:

---

[77] https://en.armradio.am/2023/10/25/possible-sanctions-against-azerbaijan-on-the-table-canadian-fm-says/

[78] https://armenpress.am/hy/article/1194555

[79] https://www.canada.ca/en/global-affairs/news/2024/09/statement-by-minister-joly-one-year-after-azerbaijans-military-operation-in-the-nagorno-karabakh-region.html , https://www.ancnews.info/?p=22938

Ասվածի վերաբերյալ թերեւս ամենածավալուն անդրադարձներից մեկը[80] ռուսական կողմից կատարել է փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը՝ 2024թ. փետրվարի կեսերին: Նա մասնավորապես ասել է. «Լեռնային Ղարաբաղը ներկայումս ինտեգրվում է Ադրբեջանի իրավական դաշտին: Ցավոք սրտի, Ղարաբաղի հայերի մեծ մասը լքել է տարածաշրջանը: Դա նրանց դժվար, բայց կամավոր ընտրությունն էր: Այս առումով կարեւոր է պայմաններ ստեղծել ցանկացողների վերադարձի համար՝ միաժամանակ ապահովելով նրանց իրավունքները եւ անվտանգությունը: Մենք պատրաստ ենք ամեն աջակցություն ցուցաբերել այս գործընթացին, այդ թվում՝ ռուսական խաղաղապահ կոնտինգենտի միջոցով, որի ներկայությունը մեծ նշանակություն ունի»[81]:

Վերադարձի հարցի մասին վերջերս խոսել էր նաեւ Հայաստանում Ռուսաստանի դեսպանը՝ հայտարարելով[82], որ Լեռնային Ղարաբաղ հայերի վերադարձի հարցը կարեւոր է Ռուսաստանի համար: Ըստ նրա՝ տարածաշրջանում ՌԴ խաղաղապահների ներկայությունն այդ մասին է վկայում: «Մենք միշտ կարծել ենք եւ հրապարակավ ասել ենք այն մասին, որ կարեւոր է, որպեսզի հայերն ապրեն իրենց պատմական հայրենիքում՝ Ղարաբաղում: Դրանով է պայմանավորված այնտեղ ռուս խաղաղապահների ներկայությունը: Ինձ համար դա այն բանի վկայությունն է, որ այդ հարցը չի հանվում»: Կոպիրկինը հավելել է, որ Ղարաբաղի այն հայերը, որոնք ցանկանում են վերադառնալ, ունեն դրա իրավունքը: «Ինչպես ես եմ հասկանում, ադրբեջանական կողմն այդ իրավունքը չի մերժում»: Ռուսական այլ շրջանակներ, հատկապես ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան, հիմնականում վերը նշված հռետորաբանությամբ անդրադարձել են հայերի Արցախ վերադարձի խնդրին:[83]

2024 թվականի ապրիլի 17-ին Կրեմլը հաստատեց ադրբեջանական ԶԼՄ-ների հաղորդագրությունները այն մասին, որ ռուս խաղաղապահները սկսել են դուրս բերվել Լեռնային Ղարաբաղից այն բանից հետո, երբ Բաքվի ուժերը գրավեցին Արցախը եւ 2023 թվականին հայ քաղաքացիներին ստիպեցին լքել տարածքը:

---

[80] Russia ready to facilitate safe return of Armenians to Karabakh, top diplomat says - Panorama | Armenian news

[81] Russia ready to facilitate safe return of Armenians to Karabakh, top diplomat says - Panorama | Armenian news

[82] https://www.panarmenian.net/arm/news/313162/

[83] https://www.azatutyun.am/a/32819809.html , https://mid.ru/en/foreign_policy/news/1914910/#103 , https://mid.ru/en/foreign_policy/news/1907469/ , https://mid.ru/en/foreign_policy/news/1907469/ , https://mid.ru/en/foreign_policy/news/1932121/ , https://hetq.am/hy/article/164151 , https://www.azatutyun.am/a/32820854.html

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, հրադադարի համաձայնագրի պայմանների համաձայն, շուրջ 2000 ռուս խաղաղապահներ տեղակայվեցին տարածաշրջանում հինգ տարի ժամկետով՝ հետագա երկարաձգման հնարավորությամբ՝ պաշտպանելու տեղի հայ բնակչությանը, ինչպես նաեւ կենսական միջանցքը, որը տարածաշրջանը կապում էր Հայաստանին:

Ադրբեջանը, սակայն, 2022 թվականի վերջին հաստատեց իր ներկայությունը Լաչինի միջանցքում եւ հաջորդ տարի այն փաստացի վերցրեց իր վերահսկողության տակ՝ 10-ամսյա շրջափակում սահմանելով Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ:

Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը ռուսական զորքերի դուրսբերման համար մեղադրել է Հայաստանի կառավարության վիճահարույց որոշումը, որով ճանաչվել է Ադրբեջանի ինքնիշխանությունը Ղարաբաղի նկատմամբ: «Դա համապատասխանում է ներկայիս իրողություններին, որոնք ձեւավորվել են տարածաշրջանում այն բանից հետո, երբ Հայաստանը ճանաչեց Ադրբեջանի սահմանները 1991 թվականի դրությամբ», – ասել է նա ռուսական պետական հեռուստատեսությանը: «Այնտեղ աշխարհաքաղաքական իրողությունները փոխվել են, եւ [խաղաղապահների] համար այլեւս գործառույթներ չեն մնացել»:[84]

Իրանի Իսլամական Հանրապետություն

«Ազատություն» ռադիոկայանին տրված հարցազրույցում[85], Հայաստանում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին, 2024 թվականի հուլիսի 12-ին ասել է, որ Իրանը կարծում է, որ անցյալ տարվա ադրբեջանական հարձակման հետեւանքով տեղահանված Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայ բնակչությունը պետք է կարողանա վերադառնալ տարածաշրջան եւ ապրել այնտեղ անվտանգ. «Մեր դիրքորոշումը Ղարաբաղի բնակիչների իրավունքների վերաբերյալ հստակ է: Մենք ճանաչում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ ընդգծում ենք դա, բայց միեւնույն ժամանակ համարում ենք, որ Ղարաբաղի հայ բնակիչների իրավունքները պետք է հարգվեն: Այդ հարցը վերքի է նման, եւ այդ վերքը պետք է բուժվի: Եվ եթե այդ վերքը չբուժվի, նորից հնարավոր է, որ բացվի: Երբ խոսվում է կայուն խաղաղության մասին, այդ վերքն էլ պետք է հաշվի առնել»: Դեսպան Սոբհանին նշել է, որ ավելի քան 100,000 ղարաբաղցի հայերը անցյալ սեպտեմբերին «հիմնական պատճառը, որ նրանք լքեցին այդ տարածքը, հենց այդ պատճառով էր, որովհետեւ չէին զգում այդ անվտանգությունը»: «Մենք հուսով ենք, որ այնպես, ինչպես Ղարաբաղի բնակիչները ոչ կամավոր լքել են իրենց տները, այնպիսի

[84] https://www.azatutyun.am/a/32916157.html
[85] https://www.azatutyun.am/a/33034148.html

պայմաններ ստեղծվեն, որպեսզի նրանք կարողանան կամավոր վերադառնալ իրենց տները»: Հարցին, թե արդյոք նրանց հայրենադարձությունը եւ անվտանգությունը պահանջում են Ղարաբաղի համար ինքնավար կարգավիճակ, դեսպանը պատասխանել է. «Ինչպիսի պայմաններ լինեն այնտեղ՝ պետք է երկխոսություն եւ բանակցություններ լինեն այդ մասին: Եկեք մենք եւ Դուք որոշում չկայացնենք նրանց փոխարեն»:

Շվեյցարիա

Շվեյցարիան 2023 թ. հոկտեմբերի 11-ի համատեղ հայտարարությունը ստորագրած կողմերից է, որով Ադրբեջանին կոչ է արվում ապահովել Լեռնային Ղարաբաղի այն հայերի իրավունքներն ու անվտանգությունը, ովքեր մնացել են եւ անհապաղ պայմաններ ստեղծել նրանց կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար, ովքեր ուզում են տուն վերադառնալ»[86]:

2024 թ. սեպտեմբերի 19-ին Շվեյցարիայի Դաշնային ժողովի 16 անդամներ, Էրիխ Վոնտոբելի գլխավորությամբ, Դաշնային խորհրդին խնդրել են պատասխանել հետեւյալ հարցերին.

- «Արդյո՞ք Շվեյցարիան ճանաչում է Լեռնային Ղարաբաղի հայերի հայրենիք վերադառնալու եւ ինքնորոշման իրավունքից օգտվելու իրավունքը:
- «Արդյո՞ք COP 29-ում Շվեյցարիայի պատվիրակությունը մտադիր է բարձրացնել Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումների եւ նրա բնակիչների վերադարձի իրավունքի հարցը»[87]:

Այս ուսումնասիրության հրապարակման պահին այս հարցերին պատասխան չկար:

Միջազգային եւ այլ կազմակերպություններ

Միջազգային ամենատարբեր բնույթ ունեցող կազմակերպություններ նույնպես անդրադարձել են Արցախի հայության վերադարձի իրավունքին: Մասնավորապես, այդպիսի կազմակերպություններից են Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը[88], Սոցիալիստական ինտերնացիոնալը[89], Միջազգային քրիստոնեական համերաշխության

[86] https://switzerland.mfa.am/en/news/2023/10/11/hrc54-%E2%80%93-joint-statement/12149
[87] https://www.parlament.ch/de/ratsbetrieb/suche-curia-vista/geschaeft?AffairId=20243925
[88] https://www.oikoumene.org/news/wcc-calls-for-international-response-to-the-needs-of-nagorno-karabakh-refugees
[89] https://www.arfd.am/new/news/70708/

կազմակերպությունը[90], “Human Rights Watch”-ը[91], Միջազգային ճգնաժամային խումբը[92], Հանրային միջազգային իրավունքի եւ քաղաքականության խումբը[93], Քրդստանի ամերիկացի բարեկամներ, Կառավարական եւ միջազգային հարաբերությունների անգլիկան գրասենյակ, Իրավունքի եւ արդարության եվրոպական կենտրոն, ՀԱՐԹ-Մեծ Բրիտանիա, Հունա-ամերիկյան առաջնորդության խորհուրդ, Ի պաշտպանություն քրիստոնյաների եւ այլն[94]:

2024 թ. սեպտեմբերի 2-ին ընդունված բանաձեւում Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան «միջազգային հանրությանը կոչ է անում համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի վերադարձի իրավունքը եւ անվտանգությունը, ինչպես հաստատվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից 2023 թ. նոյեմբերի 17-ի ժամանակավոր միջոցների մասին հրամանում»[95]:

Հայաստանի Հանրապետություն

Պետք է նկատել, որ հայկական կողմը վերադարձի իրավունքի մասին, որոշ առիթներով, հիմնականում ՄԱԿ-ի պաշտոնյաների հետ հանդիպումներում կամ կազմակերպության ժողովների ընթացքում[96], խոսում էր 2023 թ. վերջին եւ 2024թ. սկզբին, իսկ դրանից առաջ այդ իրավունքի իրացման մասին ավելի աշխույժ խոսում էին 2021թ. գարնանն ու ամռանը, նախընտրական շրջանում[97]: Հայաստանը ըստ էության Գրանադայի հայտարարության եւ 40 պետությունների համատեղ հայտարարության մասնակից կողմ է, որտեղ, ինչպես վերը նշեցինք, խոսվում է վերադարձի իրավունքի իրացման մասին:

---

[90] https://www.csi-int.org/news/csi-urges-armenian-right-of-return-to-nagorno-karabakh/
[91] https://www.hrw.org/news/2023/10/05/guarantee-right-return-nagorno-karabakh
[92] https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/responding-humanitarian-catastrophe-nagorno
[93] https://static1.squarespace.com/static/5900b58e1b631bffa367167e/t/653fca8a87273e298f8cd04f/1698679435138/PILPG+-+Nagorno+Karabakh+-+Right+of+Return+-+Oct2023.pdf
[94] https://armenianweekly.com/2024/09/19/one-year-since-the-ethnic-cleansing-of-nagorno-karabakh/
[95] https://genocidescholars.org/wp-content/uploads/2024/09/IAGS-Resolution-on-Nagorno-Karabakh.pdf , http://www.genocide-museum.am/arm/06.09.24.php
[96] https://www.mfa.am/hy/press-releases/2023/03/17/dfmvg.UN/11928 , https://www.mfa.am/hy/press-releases/2023/10/09/Gevorgyan_UN/12272 , https://www.mfa.am/hy/press-releases/2023/11/17/vahe_UN_miroslav/12342 , https://www.mfa.am/hy/press-releases/2023/12/14/vk_un/12422 , https://www.mfa.am/hy/press-releases/2023/12/14/vk_un/12422
[97] https://s00001.deespaces.com/1a3bc86a-4ba1-11ed-aeb9-93b71599bd52/b0638ef3-03c8-40b5-989c-50bfed2f0297.pdf

Արդարադատության միջազգային դատարանում, Ադրբեջանի դեմ Հայաստանի հայցի գործով, 2023 թ. հոկտեմբերի 12-ին, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչը, ներկայացրել է Հայաստանի պահանջն առ այն, «Ադրբեջանը չպետք կատարի գործողություններ, որոնց նպատակն է ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղահանել Լեռնային Ղարաբաղում մնացող հայազգի անձանց, կամ կանխել վերջին ռազմական հարձակումների ընթացքում տեղահանված անձանց արագ եւ ապահով վերադարձը իրենց տներ, այդ թվում՝ նրանց, ովքեր փախել են Հայաստան կամ երրորդ երկրներ»:[98]

Այնուամենայնիվ, 2024 թ., մինչդեռ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ «խաղաղության համաձայնագրի» շուրջ բանակցությունները շարունակվում էին եւ դեռ շարունակվում են, եւ երբ Ադրբեջանի նախագահ Ալիեւը բազմիցս քարոզում էր, որ «Ղարաբաղի հարցը վերջնականապես լուծած է» ռազմական ճանապարհով[99], Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը սկսեց կրկնել, որ ղարաբաղյան հիմնախնդիրը հարցը փակ է իր վարչակազմի համար[100]:

«Ղարաբաղի առաջնորդներին թիկունքից հարված Երեւանում[101]. 2024 թվականի սեպտեմբերի 9-ին հրապարակված հայտարարության մեջ Ղարաբաղի խորհրդարանի խոսնակի պաշտոնակատար Գագիկ Բաղունցը պնդել է, որ այն շարունակում է գործել վտարանդիության պայմաններում՝ «էթնիկ զտումներից» մեկ տարի անց: Պատգամավորները շարունակում են ստեղծված իրավիճակում պատասխանատվություն կրել արցախահայության ճակատագրի վերաբերյալ եւ հնարավոր բոլոր ջանքերը գործադրել անվտանգության երաշխիքների ներքո ապահովելու նրանց հավաքական վերադարձը հայրենիք:

Այդ պատգամավորներից Արամայիս Աղաբեկյանն ասել է, որ Հայաստանն ինքը պետք է շահագրգռված լինի, որ Ղարաբաղը մնա հայ-ադրբեջանական հակամարտության կողմ: Նա պնդել է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի խնդիրն է օգնել լուծելու հակամարտությունը, համաեվրոպական կազմակերպության կողմից չի լուծարվել՝ չնայած Բաքվի պահանջներին: Միացյալ Նահանգների, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի

---

[98] https://armenpress.am/arm/news/1121822.html

[99] https://www.anews.com.tr/world/2023/10/17/aliyev-karabakh-issue-permanently-resolved-separatists-chapter-closed , https://caucasuswatch.de/en/news/ilham-aliyev-discusses-foreign-policy-karabakh-and-controversies-with-france.html , https://apa.az/en/official-news/president-ilham-aliyev-azerbaijan-has-resolved-the-karabakh-conflict-and-there-is-no-need-for-the-minsk-group-378596 ,

[100] https://www.azatutyun.am/a/33034299.html , https://www.civilnet.am/en/news/771617/armenians-right-to-return-to-karabakh-why-is-yerevan-silent/

[101] https://www.azatutyun.am/a/33114935.html , https://www.azatutyun.am/a/artsakhi-azh-7-rd-goumarman-patgamavornery-pndoum-en-khorhrdarany-sharounakoum-e-gortsel/33114818.html

համատեղ ղեկավարած խումբը տասնամյակներ շարունակ մանդատ ուներ՝ բանակցելու Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների հետ[102]:

«Ի տարբերություն այս իշխանությունների, որոնք փորձում են բոլորին, այդ թվում՝ աշխարհին համոզել, որ Արցախի հարցը փակված է, մենք ավելի քան վստահ ենք, որ դա փակված չէ»,- ասել է արցախցի մեկ այլ պատգամավոր՝ Մետաքսե Հակոբյանը եւ շարունակել. «Մեր գործունեությունն ուղղված է Արցախի թեման թեժ պահելուն: Այժմ Ղարաբաղի ղեկավարության առաջնահերթությունները Հայաստանում ղարաբաղցի փախստականների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումն է եւ նրանց վերջնական վերադարձը հայրենիք: Այդ օրը կգա»[103]:

Վերջաբան

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ միջազգային հանրության մոտ աներկբա պահանջ կա Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի իրացման վերաբերյալ: Այս իրավիճակում հայկական քաղաքական եւ քաղաքագիտական միտքը պետք է փորձի բյուեղացնել վերադարձի իրավունքի իրացման միջազգային երաշխավորության մեխանիզմների դրույթների շուրջ պատկերացումները: Ակնհայտ է, որ ներկայումս Հայաստանի իշխանությունները խուսափում են այս խնդրի բարձրաձայնումից: Մտահոգություն կա, որ Ադրբեջանն իր հերթին կարող է «լրացնել» վերադարձի իրավունքը՝ բարձրացնելով ադրբեջանցիների՝ Հայաստան «վերադարձի» իրավունքը: Մինչեւ Արցախից իր խաղաղապահների դուրսբերումը, ռուսական կողմն էլ իր շահերն ուներ այս հարցում, ինչի համար արցախահայության թեկուզ փոքր խմբի վերադարձը դիտվում էր որպես այնտեղ իր ներկայությունը պահպանելու երաշխիք: Այս պայմաններում արցախյան կողմը մերժում է մասնակի վերադարձի առաջարկները՝ բարձրացնելով ամբողջական վերադարձի եւ միջազգային երաշխիքի հարցը:

Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների մի շարք կուսակցություններ, 2024 թ. մարտի 14-ին, հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ ասում են. «Համոզված ենք, որ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը հասնել հնարավոր է միմիայն Արցախի ժողովրդի հավաքական վերադարձով՝ ամրագրված միջազգային երաշխիքներով: Վստահ ենք, որ սա ընկալում են տարածաշրջանի եւ դրանում ներգրավված բոլոր դերակատարները»:[104]

---

[102] Նույն տեղում
[103] Նույն տեղում
[104] https://news.5tv.am/banakcayin-orakarg-nerarel-arcaxi-zhoghovrdi-mijazgayin-erashxiqnerov-arcax-veradarnalou-harcy-haytararoutyoun

2024 . սեպտեմբերի 13-ին Երեւանում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն հաստատեց, որ միջազգային իրավունքը աջակցում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Ըստ Օկամպոյի՝ հայրենիք վերադառնալու իրավունքը միանշանակ գոյություն ունի, սակայն իրականացման համար պահանջում է հստակ եւ մշակված ծրագիր: «Միջազգային իրավունքը կարեւոր է. Ադրբեջանը պարտավոր է դա հասկանալ եւ հարգել, քանի որ դա հետեւանքների կհանգեցնի նաեւ Ադրբեջանի համար»: Նա ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի իրավունքներ, որոնք պետք է ճանաչվեն[105]: Օկամպոն բացահայտել է, որ ինքը քննարկումներ է անցկացրել Լեռնային Ղարաբաղի պաշտոնյաների հետ՝ առաջարկելով օգնություն այդ հարցում: «Մենք պետք է քննարկենք, թե ինչպես պետք է պլանավորել հայերի վերադարձը, ինչպես Ադրբեջանը կճանաչի Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքները եւ ինչպես կիրացվեն այդ իրավունքները: Մանրամասն աշխատանքային ծրագիրը, որը մշակված կլինի է արցախցիների կողմից, կարեւոր է»: Իրավունքը կա, եւ մենք համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններում ենք այն կիրառելու համար: Ես միշտ նշում եմ, որ Նյուրնբերգի դատախազներից մեկը 103 տարեկան էր, նա ամեն ինչ տեսել էր, եւ երբ նրան հարցրեցինք, թե ինչ անել, նա պատասխանեց. «Երբեք մի հանձնվեք, երբեք մի հանձնվեք եւ երբեք մի հանձնվեք»: «Հայերը շատ լավ գիտեն, թե ինչ է տոկունությունը, դիմադրությունը: Այս պահին միջազգային իրավունքը ձեր կողմից է»[106]:

Էթնիկ զտման ցեղասպան գործողությունների միջոցով Արցախի հայաթափման առաջին տարելիցի կապակցությամբ 2024թ. սեպտեմբերի 19-ին հրապարակված հաղորդագրությամբ Հայ դատի կենտրոնական գրասենյակը (այս ուսումնասիրության հեղինակն ու հրատարակիչը) մասնավորապես նշում է.

«Հայաստանի Հանրապետության դեմ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման պայմաններում ձեռք բերված ցանկացած փաստաթուղթ առ ոչինչ է եւ չի կարող կասկածի տակ դնել Արցախի հարցի առկայության փաստը: Ղարաբաղյան հիմնախնդրի պատճառը Ադրբեջանի կողմից տասնամյակներ շարունակ կիրառվող հակահայ քաղաքականությունն էր. հանուն ինքնորոշման ու ազատության պայքարող ժողովրդի հանդեպ ադրբեջանական բռնության հակադրումը խորացրել է հակամարտության հետեւանքները: Հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը բնականոն է ու օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Ցանկացած պետության կամ պետությունների՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության, կողմից ստորագրված

[105] https://armenpress.am/hy/article/1199828
[106] https://news.am/arm/news/842390.html

որեւէ փաստաթուղթ չի կարող իրավազրկել այդ պայքարը:

Միջազգային երաշխավորությամբ Արցախի հայության հավաքական վերադարձի իրավունքի իրացման ապահովումը, Արցախին միջանկյալ քաղաքական կարգավիճակի տրամադրումը, Հայաստանի Հանրապետության հետ անխափան ցամաքային կապի ապահովումը, Բաքվում պատանդարված հայ գերիների, ներառյալ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ազատ արձակումը, Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումն ու հանցագործներին պատասխանատվության կանչելը, Արցախի մշակութային ժառանգության պահպանությունը այն նախադրյալներն են, որոնք պետք է առաջնորդեն հակամարտության քաղաքական կարգավորմանը:

Հայ դատի կենտրոնական խորհուրդը ղարաբաղյան հակամարտության ներկա հանգրվանի համար կարեւորում է հիմնախնդիրը միջազգային քաղաքական օրակարգի վրա պահելը եւ՛ միջազգային կազմակերպությունների, եւ՛ առանձին պետությունների դեպքում:

Ներկա զարգացումները ցույց են տալիս, որ ղարաբաղյան հակամարտությունը ոչ միայն լուծված չէ, այլ նաեւ որոշակիորեն գտնվում է միջազգային քաղաքական օրակարգի վրա: Համոզված ենք, որ միջազգային հարաբերությունների՝ ժամանակավոր բնույթ կրող ներկա վայրիվերումներից հետո, առավել լայն հնարավորություններ են բացվելու արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ պայքարը շարունակելու եւ աշխատանքներ իրականացնելու համար»[107]:

[107] https://www.ancnews.info/?p=22911

Հավելվածներ

Արցախի Հանրապետության նախագահ

Արցախ վերադարձը մեր օրակարգում է. դրանով հետաքրքրված են Եվրոպան, ԱՄՆ-ն, ՌԴ-ն, կարծում եմ նաեւ Ադրբեջանը

Մեր հաջորդ քայլը պետք է լինի այն, որ սկսենք զբաղվել այն հարցերով, որոնք թույլ կտան ամրագրել Արցախից տեղահանված մեր քաղաքացիների հետվերադարձը: Այս մասին 2023 թ. հոկտեմբերի 28-ին ասել է Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը, Արցախի հանրային հեռուստատեսության հարցազրույցում:[108]

«Դա մեր օրակարգային հարցերից մեկն է եւ պետք է սկսենք քննարկումներ ու ճանապարհների որոնումներ այդ հարցի լուծման համար»:

Հարցին, թե ի՞նչ կարգավիճակով վերադարձի մասին է խոսքը, Շահրամանյանը պատասխանել է.

«Դա քննարկումների, բանակցությունների հարց է: Բնակչության վերադարձի հարցում հետաքրքրված են տարբեր քաղաքական կենտրոններ՝ եվրոպական, ամերիկյան, ռուսական: Դրանում շահագրգռված է, ինձ թվում է, նաեւ Ադրբեջանը: Քանի որ միջազգային հանրությունից մեղադրանքներ են հնչում, որ իրենք նպաստել են մեր բնակչության բռնի տեղահանմանը»,-նշել է նա:

Դիտարկմանը, թե ոչ ազատ ու անկախ Արցախ ինքը կվերադառնա՞, Սամվել Շահրամանյանն արձագանքել է.

«Ես ունեմ իմ պատկերացումները՝ ինչպիսին պետք է լինի Արցախի կարգավիճակը եւ ինչպիսին պետք է լինի Արցախը, որպեսզի եւ ես որպես արցախցի, եւ իմ ընտանիքը կարողանա վերադառնալ: Դրա մասին դեռ վաղ է խոսել, որովհետեւ մեզ մեծ աշխատանք է սպասվում առջեւում: Եթե առաջիկայում մեզ հաջողվի նման ձեւաչափ ստեղծել եւ գործը տեղափոխել քննարկումների փուլ, իհարկե, մենք խոսելու ենք դրա մասին նաեւ մեր հանրության հետ: Այս պահին նման գործընթաց չկա, բայց ես նախադրյալներ տեսնում եմ, որ հնարավոր կլինի առաջիկայում սկսել այդ գործընթացը»:

---

[108] Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանի հարցազրույցը՝ Արցախի Հանրայինին https://168.am/2023/10/28/1950516.html

Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանի հարցազրոյցը՝ «Ֆիկարո» օրաթերթին

«Ֆիկարո» օրաթերթը Հինգշաբթի, [2024] Մարտ 28-ի իր թիւի միջազգային լուրերու էջերէն մէկը ամբողջութեամբ յատկացուցած է Հայաստանի եւ Արցախի: Էջին մէջ տեղ գտած երկու նիւթերէն մէկուն խորագիրն է՝ «Հայաստան. Տաւուշի մէջ կը կազմակերպուի "դիմադրութիւնը"»: [...] Միւս նիւթն է «Ֆիկարո-Մակազին»-ի փոխտնօրէն Ժան-Քրիսթոֆ Պիւիսոնի կատարած հարցազրոյցը Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանի հետ, զոր կը ներկայացնենք ստորեւ:[109]

Այս յատուկ էջին մասին Ժ.-Ք. Պիւիսոն X ընկերային ցանցի իր հաշիւին տեղադրած է հետեւեալ գրառումը.

«Մոռացութեան դէմ՝ ամբողջ էջ մը "Ֆիկարո"-ի այս Հինգշաբթիի թիւին մէջ: Թղթակցութիւն մը՝ Տաւուշի գիւղերէն, զորս անյաղ ազերի նախագահը կը պահանջէ Հայաստանէն եւ վեց ամիս առաջ իր 100.000 բնակիչներէն դատարկուած Արցախի աքսորեալ կառավարութեան նախագահին հետ հարցազրոյց մը»:

* * *

Հարցազրոյցին սկիզբը, Շահրամանեան անդրադառնալով 2023 Սեպտեմբեր 28-ի իր հրամանագրին՝ Արցախի Հանրապետութիւնը լուծարելու մասին, կը յայտնէ. *"Ես գիտէի, որ Արցախը «լուծարելու» փաստաթուղթը անօրինական է, բայց ան մեր հայրենակիցները փրկելու մի՛ակ միջոցն էր"*:

"Ուժերու անհաւասարակշռութեան պատճառով մենք դիմադրութիւն ցոյց տալու կարելիութիւն չունէինք, այդ պատճառով ալ շատ արագ կապ հաստատեցինք ազերպայճանցիներու հետ, որպէսզի քաղաքացիական բնակչութիւնը հեռու պահենք մարտական գործողութիւններէն:

Տասներկու ժամ տեւած բանակցութիւններէ ետք, մենք վերջ տուինք մարտական գործողութիւններուն: Արդէն յաջորդ օրը Արցախի քաղաքացիները խնդրեցին զիրենք տարհանել Հայաստան՝ վախնալով զաւթիչներու կողմէ զանգուածային սպանութիւններէն: Այսպէսով, մենք սկսանք բանակցութիւններու երկրորդ փուլը, որպէսզի բնակչութեան տարհանումը ըստ կարելւոյն սահուն ընթանայ",– կ'ըսէ նախագահը:

---

[109] https://www.norharatch.com/archives/news/%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d5%a3%d5%a1%d5%b0-%d5%bd%d5%a1%d5%b4%d5%b8%d6%82%d5%a7%d5%ac-%d5%b7%d5%a1%d5%b0%d6%80%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a5%d5%a1%d5%b6%d5%ab

Ան կը նշէ, որ Արցախի մէջ տակաւին կը մնան 10-11 հոգի, որոնք հիւանդ կամ հաշմանդամ են, չեն կրնար ազատ տեղաշարժիլ եւ չեն ուզեր ձգել իրենց հարազատներու գերեզմանները:

Պատասխանելով հարցումին, թէ գերիներու հետ շփում կա՞յ, Արցախի նախագահը կը յայտնէ, որ բացի Արցախի 8 ղեկավարներէն, կան նաեւ 7 զինուորներ, որոնք գերեվարուած են Սեպտեմբերին: Առ այդ Շահրամանեան կը խնդրէ Ֆրանսայէն՝ ճնշում բանեցնել Ազերպայճանի վրայ՝ բոլոր գերիներու ազատ արձակման պահանջով:

Անդրադառնալով այն խօսակցութիւններուն, թէ կապ կա՞յ Արցախի 5-րդ նախագահի ընտրութեան եւ անոր յաջորդած յարձակման միջեւ, նախագահը կը հերքէ այդ վարկածը՝ յիշեցնելով, որ ազերպայճանցիները արդէն անկէ առաջ զօրք կը կուտակէին շփման գօտիին մէջ:

“Ակնյայտ էր, որ մեզ թուլցնելու համար ինն ամիս տեւած շրջափակումէն ետք, անոնք կը պատրաստուէին յարձակման”,– կ’ընդգծէ ան:

Հարցումին, թէ գոյութիւն ունի՞ արդեօք վտարանդի պետութիւն եւ կառավարութիւն, նախագահը կը պատասխանէ. *“Այո՛, Երեւանի այս շէնքին մէջ ուր կը հիւրընկալեմ ձեզ, կը գտնուին Արցախի նախագահական եւ դատական ու օրէնսդիր կառոյցներու գրասենեակները: Խորհրդարանականները կրնան հաւաքուիլ այստեղ՝ քուէարկելու համար: Հոկտեմբերին ստորագրեցի հրամանագիր մը, որու համաձայն՝ կառավարութեան բոլոր նախարարները կը մնան իրենց պաշտօններուն գլուխը, կամաւոր ձեւով”:*

Պատասխանելով հնարաւոր վերադարձի մասին հարցումին՝ Արցախի նախագահը կ’ըսէ.

“Ներկայ կացութեան մէջ անիրատես է մտածել ազերպայճանցիներու կողմէ բռնագրաւուած մեր հողերը վերադառնալու մասին: Պաքուի դպրոցներուն մէջ փոքր տարիքէն երեխաներուն կը սորվեցնեն, թէ հայերը թշնամիներ են: Տարիներ հարկ է, որ ազերպայճանցիներու մտածելակերպը փոխուի եւ կարելի դառնայ դրացիներու միջեւ խաղաղ գոյակցութիւն: Եւ ես այստեղ նոյնքան կը մտածեմ Հայաստանի հայերու մասին, որքան՝ Արցախահայութեան: Երեւանի իշխանութիւնները Ինչպէ՞ս կրնան երկիրը անվտանգ համարել, երբ անոր տարածքին որոշ հատուածները արդէն բռնագրաւուած են ազերպայճանցիներու կողմէ, իսկ Պաքուի առաջնորդները հրապարակաւ կը յայտարարեն միւս տարածքներու նկատմամբ իրենց «իրաւունքներ»-ուն մասին”, – կ’եզրափակէ ան:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լուծարելու փաստաթուղթն իրավական ուժ չունի. Արցախի նախագահ

02.09.2024

Արցախ վերադառնալը մեր իրավունքն է, եւ այն չի կարող խոչընդոտ դառնալ կամ հակասել Հայաստանի պետական շահերին: Այս մասին լրագրողների հետ զրույցում սեպտեմբերի 2-ին ասել է Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը:

«Հայաստան տեղափոխվելուց հետո մենք որդեգրեցինք քաղաքականություն, եւ ես Արցախի բոլոր պաշտոնյաներին տեղեկացրի այդ մասին, որի համաձայն՝ մեզ համար Հայաստանի անվտանգությունը առաջնահերթ է: Հայաստանը նաեւ մեր հայրենիքի հիմնական մասն է, եւ մենք չպետք է սպառնալիքի տակ դնենք այն գործընթացները, որոնք իրականացնում են Հայաստանի իշխանությունները, եւ չպետք է վնասենք նրա անտանգության համակարգին:

Բայց մենք տեսնում ենք, որ տարբեր առիթներով Արցախի (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության- խմբ.) լուծարման հարցը դառնում է մանիպուլյացիաների առարկա: Դա կեղծ թեզ է:

Այդ փաստաթուղթը, որը մենք ստիպված ենք եղել ստորագրել, հնարավորություն տվեց անվտանգ Հայաստան տեղափոխել խաղաղ բնակչությանը:

Զինված ուժերը եւ ուժային կառույցների պաշտոնյաները նույնպես տեղափոխվեցին: Ցավոք, նաեւ պատանդներ վերցվեցին՝ հանձին ռազմաքաղաքական ղեկավարության:

Մենք ի սկզբանե գիտեինք, որ այդ փաստաթուղթը հակասահմանադրական եւ հակաօրինական էր: Այն իրավական ուժ չի ստացել, պաշտոնապես չի հրապարակվել, չի մտցվել իրավական համակարգ, ինչից հետո փաստաթուղթը կարելի կլիներ անվանել նորմատիվ ակտ:

Մենք գիտենք բնակչության կարծիքը: Նա չցանկացավ ինտեգրվել Ադրբեջանի կազմում, Ադրբեջանի լծի տակ, եւ որոշեց հեռանալ իր հայրենիքից: Մենք այդ փաստաթղթի առիթով որոշում ընդունեցինք: Ես այդ մասին գրավոր տեղեկացրել ենք Հայաստանի կառավարությանը՝ հանձին վարչապետի:

Խոսակցություններն այն մասին, որ այդ փաստաթուղթն ուժ ունի, անիմաստ են եւ չեն համապատասխանում իրականությանը»,- ավելացրել է Շահրամայնանը:

Նա հիշեցրել է, որ վերջին տասնամյակներին Արցախի անունից բանակցություններին մասնակցել են Հայաստանի իշխանությունները:

«Մենք կարծում ենք, որ Արցախի հարցի վերադարձը միջազգային օրակարգ Հայաստանի իշխանությունների խնդիրն է: Մենք պատրաստ ենք այդ հարցը քննարկել բոլոր շահագրգիռ կառույցների հետ:

Հայաստանի իշխանությունները հրաժարվել են Արցախից: Կարծում եմ, որ Հայաստանի բնակչության մեծ մասը չի կիսում այդ կարծիքը: Մենք համոզված ենք, որ Արցախի եւ Արցախ հայերի վերադարձի հարցը կարելի է լուծել ուժեղ Հայաստանի միջոցով: Հայաստանի իշխանությունները պետք է ամեն բան անեն արցախահայերի իրավունքները պաշտպանելու համար, այդ թվում միջազգային հարթակներում:

Մենք պատրաստ ենք բանակցությունների տարբեր ձեւաչափերում: Ամենա-գլխավորն այն է, որպեսզի ձեւակերպված լինեն եւ ներկայացվեն ճիշտ խնդիրներն ու ձեւաչափը»,- ասել է Արցածի նախագահը[110]:

Արցախի Հանրապետության Ազգային ժողով

Արցախի ԱԺ-ն Երեւանում փակ նիստ է անցկացրել. որոշվել է ձեւավորել հատուկ հանձնախումբ[111]

Արցախի ԱԺ-ն Երեւանում գտնվող Արցախի ներկայացուցչությունում 2023թ. դեկտեմբերի 2-ին, փակ նիստ է հրավիրել, օրակարգում ներառվել է երկու հարց:

168.am–ի տեղեկություններով, նախորդ շաբաթվա վերջին Արցախի Հանրապետության ԱԺ-ի հրավիրած փակ նիստի օրակարգով նախ երկու նոր պատգամավոր երդում են տվել, այնուհետեւ որոշում են կայացրել՝ ստեղծել Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբ, որն աշխարհի տարբեր անկյուններում ներկայացնելու է Արցախի ու բռնի տեղահանված արցախա-հայության հարցը:

Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ Արցախի ԱԺ պատգամավորները որոշել են նիստի եւ նիստի օրակարգի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն տարածել, սակայն մինչեւ այս պահը որեւէ հաղորդագրություն չի տարածվել:

Նիստի մեկնարկից մի քանի րոպե անց պատգամավորներն իմացել են, որ այն փակ ձեւաչափով է անցկացվելու: Նիստին մասնակցել են բոլոր պատգամավորները, բացակայել է միայն մեկը: Նիստը վարել է ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցը:

Սամվել Բաբայանի գլխավորած «Միացյալ հայրենիք» խմբակցությունը, առանց

---

[110] https://news.am/arm/news/840373.html
[111] Աղբյուրը՝ https://168.am/2023/12/05/1967208.html

որեւէ լուրջ պատճառաբանության, ձեռնպահ է քվեարկել հանձնախումբ ստեղծելու որոշմանը, անկախ պատգամավորներից մեկն էլ քվեարկելուց առաջ դուրս է եկել նիստից:

Արցախի ԱԺ փակ նիստի ընթացքում չի որոշվել, թե ինչ ձեւաչափով է լինելու հանձնախումբը, սակայն կա մտադրություն ընդգրկել այնպիսի թեկնածուների, որոնք քաջատեղյակ են Արցախի հիմնախնդրին՝ այսպես ասած՝ ուղնուծուծով գիտեն խնդրի ակունքները: Հանձնախումբը գործունեության արդյունքում հաշվետու է լինելու Արցախի ԱԺ-ին:

Արցախի ԱԺ-ն փակ նիստի ընթացքում որոշել են լուռ իրենց աշխատանքը կատարել:

Արցախի Ազգային ժողովը վերահաստատում է իր հանձնառությունը՝ տեր կանգնելու Արցախի ժողովրդի իրավունքներին. հայտարարություն

2023 թ. Դեկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները Արցախի Հանրապետության Անկախության հանրաքվեի, մարդու հիմնարար իրավունքների եւ ցեղասպանության կանխարգելման միջազգային օրվա կապակցությամբ այցելել են Եռաբլուր պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախի ազգային- ազատագրական պայքարի ճանապարհին նահատակված հայորդիների շիրիմներին: Օրվա կապակցությամբ ԱՀ ԱԺ-ն հանդես է եկել հայտարարությամբ.[112]

«Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ ինքնորոշման եւ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա Հանրապետության կայացման առհավատչյան 1991 թվականի Անկախության հանրաքվեն է: 1991 թվականի Անկախության հանրաքվեն այն հիմնաքարն էր, որի վրա կառուցվեց Արցախի Հանրապետությունը եւ դարձավ համայն հայության պարծանքն ու հաղթանակի փարոսը: Արցախի ժողովուրդը 2006 թվականի նույն օրը Սահմանադրության ընդունման հանրաքվեով մեկ անգամ եւս արտահայտեց անկախ պետություն ունենալու եւ ազատության համար պայքարի ուղին անշեղորեն շարունակելու իր կամքը:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետեւանքով զոհվեցին հարյուրավոր մեր հայրենակիցներ, այդ թվում ՝ երեխաներ եւ կանայք, հայաթափվեց հայ ժողովրդի հազարամյա հայրենիք Արցախը: Անվտանգության եւ իրավունքների իրացման անհնարինությունից ելնելով՝ Արցախի բնակչությունը դիմեց

[112] https://www.aravot.am/2023/12/10/1387826/

հայրենիքը լքելու ծայրահեղ քայլի: Այս ամենին իր գնահատականը տվեց նաեւ միջազգային հանրությունը: Ֆրանսիայի եւ Կիպրոսի արտաքին գործերի նախարարությունները, Գերմանիայի Բունդեսթագը, Ավստրիայի եւ Նիդեռլանդների խորհրդարանները, Եվրախորհրդարանը, Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը եւ այլ միջազգային հեղինակավոր կազմակերպություններ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը որակեցին որպես էթնիկ զտում: Ադրբեջանը, հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն իրականացնելուց հետո, միջազգային դերակա-տարների աչքին թոզ փչելու եւ իր արարքն արդարացնելու համար, որպես ռազմական գործողությունների դադարեցման նախապայման, Արցախի Հանրապետության Նախագահին պարտադրեց ստորագրել փաստաթուղթ: Ի սկզբանե գիտակցելով Ադրբեջանի կողմից պարտադրվող փաստաթղթի հակասահմանադրականությունը, գնահատելով խաղաղ բնակչությանը ցեղասպանության ենթարկելու, նրա ազատ տեղաշարժը խոչընդոտելու եւ կամայական ձերբակալությունների հնարավոր վտանգների առկայությունը՝ նախագահի կողմից ընդունվեց հրամանագիր, որով մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը պետք է կազմալուծվեին Արցախի պետական ինստիտուտները, իսկ բնակչությունը որոշում կայացներ՝ լքել հայրենիքը կամ ինտեգրվել Ադրբեջանին: Հաշվի առնելով Արցախի հարցի վերջնական փակմամբ շահագրգռված կողմերի կատարված եւ կատարվող քայլերի ինտենսիվությունն ու դրանում շահագրգիռ կողմերի ագրեսիվ վարքագիծը՝ Ազգային ժողովը վերահաստատում է իր հանձնառությունը՝ տեր կանգնելու Արցախի ժողովրդի իրավունքներին եւ հայտնում իր պատրաստակամությունը՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկելու բոլոր խնդրահարույց հարցերը: Արցախի Հանրապետության Ազգային ժողովը, հավատարիմ Արցախի ժողովրդի ազատ կամքի արտահայտման արդյունքում ստացած մանդատին, վճռական է պաշտպանելու հայ ժողովրդի հազարավոր հայորդիների արյունով ու քրտինքով իրացված իրավունքներն ու ազատությունը»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Արցախի Ազգային ժողովի ղեկավար կազմը հանդիպել է Արցախի հարցերով Հանձնախմբի համակարգողի հետ

Այսօր՝ [2024 թ.] փետրվարի 19-ին, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալ, նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղունցը եւ խմբակցությունների ղեկավարները հանդիպել են Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության եւ հիմնարար այլ իրավունքների պաշտպանության նպատակին կոչված Հանձնախմբի համակարգող Վարդան Օսկանյանի հետ:

Հանդիպման մասնակիցները շեշտել են, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուծված չէ, որ Արցախի հայաթափումը եւ ժամանակավոր բռնազավթումը չի կարող վերացնել Արցախի ժողովրդի ինքնորոշման անքակտելի իրավունքը, սեփական հազարամյա բնօրրանում անվտանգ եւ ապահով ապրելու բնական պահանջը, որն ամրագրված է միջազգային իրավունքի նորմերով:

Քննարկվել են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են միջազգային հիմնավոր երաշխիքների ներքո ստեղծելու անվտանգ ու իրավական դրույթներով ամրագրված միջավայր՝ արցախահայության հայրենադարձման եւ անվտանգ ու ապահով կենսագործունեության իրականացման համար՝ բացառելով ֆիզիկական գոյության ու ինքնության սպառնալիքները: Կարեւորվել է այդ ուղղությամբ համահայկական կառույցների եւ անհատների ջանքերի նպատակաուղղված եւ թիրախային համադրումը:

Անթույլատրելի է համարվել արցախահյության հայրենադարձման հարցի շահարկման եւ չարաշահման որեւէ դրսեւորում:

Արցախի Հանրապետության Ազգային ժողով[113]

Արցախի եւ Հայաստանի մի շարք քաղաքական ուժերի հայտարարությունը[114]

Մենք՝ ներքոստորագրյալներս, Հայաստանի իշխանություններից պահանջում ենք արտաքին քաղաքականության օրակարգում ներառել եւ բանակցային գործընթացի շրջանակում պարտադիր քննարկման առարկա դարձնել Արցախի ժողովրդի՝ միջազգային երաշխիքներով Արցախ վերադառնալու հավաքական իրավունքն իրացնելու պահանջը:

Արցախի ժողովրդի էթնիկ զտումն ու հայրենազրկումն արդյունքն է Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի նորմերի եւ քաղաքական պայմանավորվածությունների կոպիտ խախտման, եւ չկա միջազգային որեւէ դերակատար, որը կկարողանա հերքել խնդիրն օրակարգ բերելու հայկական կողմի իրավունքը:

Առանց խոչընդոտների եւ միջազգային երաշխիքներով իր հազարամյակների հայրենիքում ազատ ապրելն Արցախի ժողովրդի անքակտելի իրավունքն է եւ դրա նախապայմանը՝ հավաքական վերադարձը, որն ամրագրված է միջազգային հիմնարար կոնվենցիաներով եւ փաստաթղթերով, ինչպես նաեւ Արդարադատության միջազգային

[113] https://www.arfd.am/new/news/70523/
[114] https://www.arfd.am/new/news/71008/

դատարանի՝ Արցախի վերաբերյալ կայացված որոշումներով:

Հարավային Կովկասում չի կարող լինել խաղաղության ակնկալիք, առավել եւս՝ երաշխիք, քանի դեռ հայկական կողմը չի ձեւակերպել եւ օրակարգ չի բերել արդարության պահանջը: Սրա ապացույցն Ադրբեջանի պահվածքն է եւ խաղաղության հասնելու հայկական կողմի ապարդյուն փորձերը: Հնարավոր չէ հասնել խաղաղության եւ կարգավորման մի իրավիճակում, երբ կողմերից մեկը զրկված է իր շահերի պաշտպանության հնարավորությունից:

Համոզված ենք, որ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը հասնել հնարավոր է միմիայն Արցախի ժողովրդի հավաքական վերադարձով՝ ամրագրված միջազգային երաշխիքներով:

Վստահ ենք, որ սա ընկալում են տարածաշրջանի եւ դրանում ներգրավված բոլոր դերակատարները: Հայաստանի իշխանության պատասխանատվությունն է առնվազն այս հարցում դրսեւորել դիվանագիտական հմտություն եւ քաղաքական կամք՝ հօգուտ Հայաստանի ու հայ ժողովրդի գոյութենական սպառնալիքների չեզոքացման:

2024թ. մարտի 14

«Ազատ Հայրենիք-ՔՄԴ» խմբակցություն

«Հայ Յեղափոխական Դաշնակցության» արցախյան կառույց

Արցախի «Արդարություն» կուսակցություն

Արցախի «ժողովրդավարական» կուսակցություն

«Հայաստան» դաշինք

«Պատիվ ունեմ» դաշինք

«Ազգային անվտանգություն» կուսակցություն

«Հայաստանի դեմոկրատական» կուսակցություն

«Հայաստանի հանրապետական» կուսակցություն

«Հայաքվե» քաղաքացիական նախաձեռնություն

«Միասին» շարժում

Արցախի ԱԺ խմբակցությունների հայտարարությունը[115]

Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության տարածքից ՌԴ խաղաղապահ զորախմբի դուրսբերման գործընթացը, որը մեկնարկեց օրերս, խիստ մտահոգիչ է ամիսներ առաջ ցեղասպանության իրական սպառնալիքի տակ իր հայրենիքից տեղահանված 150 հազար արցախցիների համար: Արցախի Հանրապետության ժողովրդի կողմից ընտրված օրինական իշխանությունների եւ Ազգային ժողովի խմբակցությունների համար նախորդ ամիսներին եղել եւ շարունակում

[115] https://www.arfd.am/new/news/71831/

է առաջնահերթություն մնալ արժանապատիվ եւ հավաքական վերադարձի հարցը, որում անկյունաքարային նշանակություն ունի մեր հիմնարար իրավունքների եւ անվտանգության երաշխավորումը:

2020թ. սեպտեմբերի 27-ից հետո մեր տարածաշրջանը հայտնվել է լուրջ տրանսֆորմացիաների տիրույթում եւ 44-օրյա պատերազմից հետո ստեղծված իրավիճակը որեւէ կերպ չի երաշխավորում սպասված եւ խոստացված տեւական խաղաղությունն ու կայունությունը: Արցախի ժողովուրդն իր կամքից անկախ հայտնվեց 2020թ. նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարության դրույթների թակարդում եւ հավատաց Ռուսաստանի Դաշնության բարձր ղեկավարության՝ իր անվտանգությունն ապահովելու հավաստիացումներին: Ստիպված ենք ցավով ու ափսոսանքով արձանագրել, որ Եռակողմ հայտարարությունը ստորագրած բոլոր կողմերի համար Արցախի ժողովրդի ճակատագիրը դարձավ երկրորդական նշանակության խնդիր, որի պատճառով 2023թ. սեպտեմբերին Արցախն ամբողջովին հայաթափվեց:

Միաժամանակ, ակնհայտ է, որ Արցախում միջազգային ներկայության բացակայությունը լրացուցիչ ազատություն է տալու «ամեն հայկականի» ոչնչացման եւ ընդհանրապես հայկական հետքի վերացման քաղաքականություն իրականացնող Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Նման իրավիճակում սպառնալիքի տակ են հայտնվելու հայկական հոգեւոր, մշակութային բազմադարյա կոթողները, հայության սեփականությունն ու ազգային ունեցվածքը:

Արցախի ժողովրդի՝ իր հազարամյա հայրենիքում միջազգային երաշխիքների առկայությամբ, բոլոր իրավունքների ու ազատությունների պահպանմամբ անվտանգ ու ապահով ապրելը անքակտելի իրավունք է, եւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի երեք խմբակցությունները մտահոգված են, որ Արցախից միջազգային կառույցների դուրսբերումն ընդհանրապես, իսկ ռուս խաղաղապահ զորակազմի դուրսբերումը՝ մասնավորապես, վտանգում է այդ իրավունքը: Միաժամանակ, կարեւոր ենք համարում ընդգծել նաեւ, որ նման որոշումների կայացումն առանց տարածաշրջանի բնիկ ժողովրդի՝ արցախահայության ներկայացուցիչների հետ քննարկումների, անընդունելի է եւ որեւէ կերպ չի կարող նպաստել կայուն, երկարաժամկետ խաղաղության հաստատմանն ու խնդրի հանգուցալուծմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հորդորում են ՌԴ համապատասխան կառույցներին ու նրանց պատասխանատուներին անհապաղ խորհրդատվություններ ու քննարկումներ սկսել Արցախի ժողովրդի օրինական ընտրված ներկայացուցիչների հետ՝ Արցախի Հանրապետության տարածքից ՌԴ խաղաղապահ զորախմբի դուրսբերման իրական պատճառների, դրա հետեւանքով ստեղծված աղետալի վիճակի, առաջացած բազմաթիվ

մարտահրավերների եւ դրանց հաղթահարման համար անհրաժեշտ ջանքեր գործադրելու վերաբերյալ:

«Արդարություն» խմբակցություն

«ՀՅ Դաշնակցություն» խմբակցություն

«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն

Երեւան, 19. 04. 2024 թ.

Արցախի ԱԺ-ն դիմել է ՀՀ իշխանություններին, ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին, ՄԱԿ-ին

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարություն է տարածել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության 33-ամյակի առթիվ՝ դիմելով ՀՀ իշխանություններին, ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին, ՄԱԿ-ին:

Կոչ է արվում **ապահովել Արցախի Հանրապետության ժողովրդի**՝ իրենց մշտական բնակության վայրեր **վերադարձն** ու այլ հավասար եւ անկապտելի իրավունքների իրացումը՝ որպես ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմք:

«1991թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին պատմական որոշումը: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին կայացած համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով եւ 1992թ. հունվարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագրով կազմավորվեց հայկական երկրորդ հանրապետությունը:

Շուրջ երեսուն տարիների ընթացքում, չնայած Ադրբեջանի մշտական սպառնալիքներին, սահմանադրական ամուր հիմքերով եւ արդյունավետորեն գործող պետական ու ժողովրդավարական հաստատություններով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ժողովուրդը ապահովում էր հայկական երկրորդ հանրապետության զարգացումը՝ փորձելով դառնալ պետությունների համաշխարհային ընտանիքի մաս:

Արցախահայության համար այս ծանրագույն ժամանակներում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության Ազգային ժողովը, առաջնորդվելով ժողովրդի կողմից

իրեն վստահված մանդատով եւ նրա ապագայի նկատմամբ պատասխանատվությամբ, արձանագրում է.

- Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության ժողովուրդը իր ինքնորոշման իրավունքն իրացրել է միջազգային իրավունքի բոլոր նորմերին համապատասխան՝ որեւէ առնչություն չունենալով Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականության հետ:

- Հայաստանի Հանրապետությունը, որպես Լեռնային Ղարաբաղի Հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններում Արցախի ժողովրդին ներկայացնող կողմ, անտեսելով ՀՀ Անկախության Հռչակագրից բխող պարտավորությունները, շրջանցելով Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորի իր անվերապահ դերն ու խախտելով 1992թ. հուլիսի 8-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը, Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում:

- Ադրբեջանական Հանրապետությունը, որպես Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն իրականացրած սուբյեկտ, խաղաղության մասին բարձրագոչ հայտարարություններով մոլորեցնելով միջազգային հանրությանը, այսօր էլ որդեգրել է հայկական հետքը Արցախից վերացնելու՝ պատմամշակութային ժառանգությունը ոչնչացնելու քաղաքականություն, շարունակելով պատանդի կարգավիճակով ապօրինաբար պահել գերիների, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությանը:

- Ռուսաստանի Դաշնությունը, որպես ռուսական կայսրության եւ ԽՍՀՄ իրավահաջորդ, հանդիսանալով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կողմ եւ երաշխավոր, իր փաստացի ներկայության պայմաններում չի կանխել Ադրբեջանի կողմից Արցախի ամբողջական հայաթափումը:

- ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ ի դեմս համանախագահ երկրներ ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի՝ որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման միակ օրինական մանդատ ունեցող կառույց, վճռական կեցվածք չորդեգրեց իր իսկ կողմից հռչակած սկզբունքների պահպանման գործում: Ադրբեջանն այդ ամենը գնահատեց որպես թուլություն եւ, արհամարհելով միջազգային հանրության կողմից ընդունված ուժի չկիրառման մոտեցումները, 2020թ. եւ 2023թ. պատերազմական գործողությունների եւ ցեղասպանական քաղաքականության միջոցով բռնազավթեց միայնակ մնացած հայ ժողովրդի բազմադարյան բնօրրաններից մեկը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության տարածքը:

Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության ներկայացուցչական

մարմինը, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, կոչ է անում.

ՀՀ իշխանություններին՝

- Միջազգային ատյաններում օրակարգային դարձնել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության ժողովրդի՝ հայրենիք հավաքական կերպով վերադառնալու իրավունքի հարցը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին՝

- Ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականության եւ ուժի չկիրառման սկզբունքների հիման վրա շարունակել միջնորդական առաքելությունն Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ապրելու իրավունքի իրացման նպատակով:

ՄԱԿ-ին, ՄԱԿ անդամ երկրներին՝

- Միջազգայնորեն ստանձնած մանդատի, պարտավորությունների եւ միջնորդությունների շրջանակում միջազգային հանրահայտ նորմերի եւ սկզբունքների, ինչպես նաեւ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության հռչակման իրավա-քաղաքական փաստերի հիմքով Արցախի ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների հետ գործակցությամբ ապահովել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության ժողովրդի՝ իրենց մշտական բնակության վայրեր վերադարձն ու այլ հավասար եւ անկապտելի իրավունքների իրացումը՝ որպես ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմք:

Մեր խոնարհումն ենք բերում ազատագրական պայքարի եւ պետականակերտման ճանապարհին իրենց կյանքը նվիրաբերած հերոսներին»[116]:

Երեւան

02.09.2024

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտե

Ստեղծվել է Արցախի ժողովրդի իրավունքների հանձնախումբ, որը կղեկավարի Վարդան Օսկանյանը

Հայաստանի նախկին արտգործնախարար (1998-2008) Վարդան Օսկանյանը կղեկավարի նոր ձեւավորված՝ Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության եւ

[116] https://a1plus.am/hy/article/477765

հիմնարար այլ իրավունքների պաշտպանության հանձնախումբը: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրառում է արել նախկին արտգործնախարարը:[117]

Ըստ Օսկանյանի՝ Հանձնախումբը ստեղծվել է Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցությամբ:[118]

«Հանձնախմբի գլխավոր խնդիրը լինելու է միջազգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության եւ իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրավունքի պաշտպանությունը եւ հետապնդումը: Ես համոզված եմ, որ այս հարցի հետապնդումը եւ իրականացումը կնպաստի իրական խաղաղության հաստատմանը մեր ժողովուրդների միջեւ»,- գրել է նա:

Ըստ Օսկանյանի՝ տարածաշրջանում տեւական խաղաղության հաստատումն անհնար է, երբ հայ ժողովրդի մի հատվածը բռնի տեղահանված է իր բնօրրանից, իսկ Հայաստանին պարտադրվում է ստորադաս «խաղաղություն»՝ նոր կորուստների սպառնալիքով. «Նման "կայունությունը" չի կարող մշտական լինել: Խնդրի միայն հավասարակշռված լուծումը, որը ներառում է Արցախի ժողովրդի իրավունքների վերականգնումը, կարող է բերել տեւական ու կայուն խաղաղություն»:

Հանձնախումբը եւս այսօր լրատվամիջոցներին հաղորդագրություն է[119] ուղարկել իր ստեղծման մասին:

«Գործունեության մեկնարկի, Հանձնախմբի անդամների եւ այլ մանրամասների մասին կտեղեկացվի լրացուցիչ՝ առաջիկա օրերին: Ակնկալում ենք, որ արցախցիների հիմնարար իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն ծավալող անհատները, խմբերն ու հաստատությունները կհամագործակցեն համապատասխան լիազորություն ստացած այս Հանձնախմբի հետ»,- նշվում է հաղորդագրությունում:

«Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով ստեղծված հանձնախմբի առաջին հայտարարությունը

---

[117] https://www.civilnet.am/news/762160/%d5%bd%d5%bf%d5%a5%d5%b2%d5%ae%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%aa%d5%b8%d5%b2%d5%b8%d5%be%d6%80%d5%a4%d5%ab-%d5%ab%d6%80%d5%a1%d5%be%d5%b8%d6%82%d5%b6%d6%84%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%b6%d5%b1%d5%b6%d5%a1%d5%ad%d5%b8%d6%82%d5%b4%d5%a2-%d5%b8%d6%80%d5%a8-%d5%af%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%ab-%d5%be%d5%a1%d6%80%d5%a4%d5%a1%d5%b6-%d6%85%d5%bd%d5%af%d5%a1%d5%b6%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8/

[118] Այնուհետ՝ հանձնախումբն իր հայտարարությունների վերջում գրում է հետեւյալը. «Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեն լիազորվել է Արցախի խորհրդարանի 2023 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ»:

[119] Տե՛ս ներքեւում:

2024 թ. հունվարի 18 – Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության եւ հիմնարար այլ իրավունքների պաշտպանության նպատակին կոչված Հանձնախումբն արդեն ձեւավորված է:

Հանձնախմբի անդամների առաջարկությամբ հանձնախմբի աշխատանքների համակարգումը կիրականացնի ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Գործունեության մեկնարկի, Հանձնախմբի անդամների եւ այլ մանրամասների մասին կտեղեկացվի լրացուցիչ՝ առաջիկա օրերին:

Ակնկալում ենք, որ արցախցիների հիմնարար իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն ծավալող անհատները, խմբերն ու հաստատությունները կհամագործակցեն համապատասխան լիազորություն ստացած այս Հանձնախմբի հետ:[120]

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախմբի կազմը կընդլայնվի. Հայտարարություն

Ի լրումն 2024-ի հունվարի 18-ի հայտարարության՝ Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցությամբ ձեւավորված Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախումբը հայտնում է, որ հանձնախմբի նախնական կազմում հետեւյալ անհատներն են.

Վարդան Օսկանյան, ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008)

Գեղամ Ստեփանյան, Արցախի մարդու իրավունքների պաշտպան

Կարեն Բեքարյան, «Հայացք» վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ, Հայաստան

Մարիո Նալպատյան, Հայ դատի կենտրոնական Խորհրդի անդամ, Արգենտինա

Գասպար Կարամպետյան, Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ, Բելգիա

Գառնիկ Քըրքոնեան, միջազգային իրավաբան, ԱՄՆ

- Հանձնախմբի կազմը կընդլայնվի՝ ներառելով անհատների Ռուսաստանից եւ

[120] https://www.panorama.am/am/news/2024/01/18/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%A2/2953664 , անգլերեն՝ https://artsakhforum.net/?p=2586

Մերձավոր Արեւելքից:

- Հանձնախմբի գլխավոր խնդիրը լինելու է Արցախի ժողովրդի՝ միջազգային երաշխիքներով հավաքական հայրենադարձության եւ իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրավունքի հետապնդումը եւ պաշտպանությունը:

- Արցախի ժողովուրդը ցեղասպանության սպառնալիքի տակ բռնի տեղահանված է իր տնից, հողից ու հայրենիքից եւ նրա բնական եւ անքակտելի իրավունքն է անխոչընդոտ վերադառնալ իր բնօրրանը, շարունակել բնականոն ժողովրդավարական կյանքը՝ իր լեզվի, մշակույթի, հոգեւոր ժառանգության պահպանման, սեփականության վերատիրացման, զարգացման եւ կյանքի կազմակերպման՝ միջազգայնորեն ընդունելի նորմերով եւ սկզբունքներով:

- Հակամարտության հետեւանքով բռնի տեղահանվածների՝ իրենց հայրենիք կամավոր վերադառնալու իրավունքը ճանաչված է որպես միջազգային իրավունքի նորմ, որը հիմնավորվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (Universal Declaration of Human Rights), Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիաով (International Convention on Civil and Political Rights) եւ տարածաշրջանային բազմաթիվ հռչակագրերով:

- Ավելին, 2023-ի նոյեմբերի 17-ին Արդարադատության միջազգային դատարանը (ICJ) վճռել է, որ Ադրբեջանի Հանրապետությունը պետք է ապահովի 2023-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղը լքածների անվտանգ եւ անարգել վերադարձը:

- Հանձնախումբը բազմակողմանի գործունեություն է ծավալելու միջազգային հարթակներում՝ բարձրաձայնելու, ծանոթացնելու, հիմնավորելու եւ հետապնդելու Արցախի ժողովրդի խնդիրները, շահերը եւ իրավունքները:

- Հանձնախումբը, վերը նշված նպատակների կյանքի կոչման համար, մշտական ու հետեւողական աշխատանք է իրականացնելու արցախահայության, Հայաստանի հանրության ու Սփյուռքի հայրենակիցների հետ՝ նպատակ ունենալով կոնսոլիդացնել բոլոր ռեսուրսները, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, ակադեմիական եւ փորձագիտական շրջանակների:

- Հանձնախումբը Արցախի ժողովրդին ներկայացնելու է պետական եւ քաղաքական մարմինների առաջ, ինչպես նաեւ միջազգային ատյաններում, համաժողովներում եւ միջազգային դատարաններում:

- Ակնկալում ենք, որ ՀՀ իշխանությունները եւ քաղաքական բոլոր ուժերը աջակցության եւ համագործակցության պատրաստակամություն կցուցաբերեն Հանձնախմբի գործունեությանը: Հանձնախումբը պատրաստ է աշխատել անխտիր

յուրաքանչյուրի եւ բոլորի հետ, ովքեր պատրաստ են պատասխանատվություն ստանձնել՝ համապատասխան լիազորություն ստացած այս հանձնախմբի հետապնդած նպատակների շրջանակներում:[121]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Եվրոպական խորհրդարանի 12 մարտի, 2024թ. բանաձեւի վերաբերյալ

2024թ. մարտի 19 – Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբը ողջունում է Եվրոպական խորհրդարանի 2024 թվականի մարտի 12-ի բանաձեւի 14-րդ կետում ներկայացված նախաձեռնությունը, որը միանշանակորեն հաստատում է արցախահայության՝ միջազգային ներկայության ներքո հայրենիք վերադառնալու իրավունքը:

Խորհրդարանի վճռական կոչն ընդգծում է այն իրողությունը, որ արցախահայության անվտանգությունն ու ապահովությունը չի կարող երաշխավորվել առանց միջազգային ներկայության եւ պաշտպանության: Բանաձեւում հայտարարված ձեւակերպմանը եւ Արդարադատության միջազգային դատարանի որոշումներին համահունչ հանձնախումբը պատրաստ է ներգրավվել միջազգային մանդատ ունեցող գործընթացում, որն ապահովում է արցախահայության՝ անվտանգ, արժանապատիվ վերադարձը իրենց հայրենիք՝ միջազգային պաշտպանության ներքո, հարգելով նրանց ինքնորոշման իրավունքը:

Միջազգային պաշտպանության ներքո իրենց հայրենիք վերադառնալու արցախահայության իրավունքը բանակցային դիրքորոշում չէ, այլ մանդատ՝ հիմնված մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների վրա:

Հակառակ բանաձեւին Ադրբեջանի ապակառուցողական արձագանքին, խորհրդարանի ներգրավվածությունն այս հարցի լուծմանը ոչ միայն արդարացված եւ ողջունելի է, այլեւ կարեւոր եւ ծանրակշիռ: Այս հարցում Եվրոպական խորհրդարանի դիրքորոշումն ընդգծում է միջազգային վերահսկողության անփոխարինելի դերը արցախահայության՝ իրենց հայրենի հող անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի ապահովման, ինչպես նաեւ հայկական կրոնական եւ մշակութային ժառանգության պահպանության գործում, որը ներկայումս ամեն օր ենթարկվում է քանդման եւ պղծման:

Չափազանց կարեւոր է անհապաղ ստեղծել Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմ եւ ձեւաչափ: Կոչ ենք անում

[121] https://www.aravot.am/2024/02/02/1397575/ , անգլերեն՝ https://artsakhforum.net/?p=2370

անդամ պետություններին եւ միջազգային կազմակերպություններին ակտիվորեն աշխատել հիմնարար իրավունքներից շարունակվող զրկանքների վերացման եւ Արցախի բնիկ ժողովրդի վերջնական ոչնչացումը կանխելու ուղղությամբ եւ կոչ ենք անում ԵՄ կառույցներին, ներառյալ ԵՄ գործադիրին, անհապաղ քայլեր ձեռնարկել ԵՄ բանաձեւում արված կարեւոր կոչերն իրականացնելու ուղղությամբ: Հարկադիր տեղահանումը չի կարող լեգիտիմացվել որպես հակամարտությունների կարգավորման մեթոդ: Իրավիճակի լրջության գիտակցումը եւ խաղաղության եւ արդարության ապահովմանն ուղղված միջազգային ջանքերի հետ համագործակցելը իրական հաշտեցման եւ կայուն խաղաղության միակ ճանապարհն է:[122]

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեն լիազորվել է Արցախի խորհրդարանի 2023 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ

Միջազգային պաշտպանության ներքո արցախահայերի վերադարձը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության բանալին. Վարդան Օսկանյան

2024թ. հուլիսի 9-ին «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» իրավապաշտպան կազմակերպությունը հարակից ձեռնարկ (side event) էր կազմակերպել Ժնեւում, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում: Միջոցառման ընթացքում ընդգծվեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ հայրենիք վերադառնալու իրավունքը՝ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության կերտման կարեւոր բաղադրիչ:

Միջոցառմանը ներկա էին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի երեք անդամներ՝ ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը, Լեռնային Ղարաբաղի նախկին փոխարտգործնախարար Արմինե Ալեքսանյանը եւ մարդու իրավունքների պաշտպան, փաստաբան Գառնիկ Քերքոնյանը:

Հանձնապումբը ղեկավարող Վարդան Օսկանյանը հանդես եկավ հիմնական բանախոսությամբ՝ շեշտելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղություն հնարավոր է միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների վերականգնմամբ: Ստորեւ ներկայացնում ենք Օսկանյանի ելույթից մի հատված.

«Այսօր Ադրբեջանը հանդուգն է՝ զրկելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդին իր հիմնարար իրավունքներից: Ադրբեջանն ապօրինի պահում է հայ ռազմագերիներին,

[122] https://artsakhforum.net/?p=2308 , անգլերեն՝ https://artsakhforum.net/?p=2303

մինչդեռ բոլոր ադրբեջանցի ռազմագերիները վերադարձվել են: Այն պահում է անմեղ քաղաքացիական անձինք եւ, ամենահայտնին, Լեռնային Ղարաբաղի ներկայիս եւ նախկին քաղաքական առաջնորդների մի մեծ խումբ, որոնց հետ Ադրբեջանի ղեկավարությունը եւ միջազգային հանրության ներկայացուցիչները, հիմնականում Մինսկի խմբի համանախագահները, տասնամյակներ շարունակ խաղաղությանն ուղղված զրույցներ են ունեցել: Ադրբեջանը համառորեն եւ անպատիժ կերպով օտարում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ունեցվածքը, պղծում, ոչնչացնում եւ վերացնում է հայկական դարավոր մշակութային ժառանգությունը: Ի հավելումն այս ամենի, Ադրբեջանը օկուպացնում է Հայաստանի Հանրապետության մի հատվածը եւ սպառնում է Հայաստանի այլ տարածքների յուրացմամբ:

Թեեւ Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը չի նպաստում անվտանգ վերադարձին, միջազգային իրավունքը պաշտպանում է բռնի տեղահանվածների՝ իրենց ծագման տարածք վերադառնալու իրավունքը: Այս իրավունքը ճանաչվում է որպես միջազգային իրավունքի, մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային նորմ:

Անցյալ տարվա նոյեմբերի 17-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը Ադրբեջանից պահանջում էր նպաստել Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգ եւ անարգել վերադարձին իրենց երկիր: Այս տարվա մարտի 12-ին Եվրախորհրդարանը բանաձեւ ընդունեց, որով կոչ էր անում Ադրբեջանին բովանդակալից երկխոսության մեջ մտնել Ղարաբաղի հայերի հետ՝ ապահովելու նրանց իրավունքները եւ անվտանգությունը, ներառյալ միջազգային պաշտպանության ներքո իրենց տները վերադառնալու իրավունքը: Մինչ այժմ Ադրբեջանը ոչ մի բովանդակալից քայլ չի ձեռնարկել այդ պահանջները կատարելու համար:

Ես կոչ եմ անում ՄԱԿ-ին՝ ի դեմս ռասիզմի, ռասայական խտրականության ժամանակակից ձեւերի գծով հատուկ զեկուցող Մադամ Աշվինիի, փաստահավաք այց կատարել Լեռնային Ղարաբաղի տեղահանված մարդկանց եւ Մարդու իրավունքների խորհրդին զեկույց ներկայացնել Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումների վերաբերյալ:

Հիմա թույլ տվեք վերադառնալ այնտեղ, որտեղից սկսեցի իմ խոսքը արդար եւ կայուն խաղաղության մասին: Չնայած մարտահրավերներին, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը հաստատակամ է մնում հայրենիք վերադառնալու, քաղաքական ապագան որոշելու եւ սեփական ժողովրդավարական ինքնակառավարումն իրականացնելու իր վճռականության մեջ:

Հայրենադարձությունը միջազգային պաշտպանության ներքո, ինչպիսիք են ՄԱԿ-ի անցումային վարչակազմը եւ խաղաղապահությունը, վճռորոշ նշանակություն ունեն

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ արդար եւ կայուն խաղաղության հասնելու համար: Կայունության փխրուն հասկացությունը, որը ձեռք է բերվել հարկադրանքի եւ ուժի միջոցով, իր էությամբ անկայուն է: Հարատեւ խաղաղությունը կարող է իրականացվել միայն համապարփակ բանաձեւի միջոցով, որը վերականգնում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքները:

Այս սկզբունքը պետք է ամրագրվի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցանկացած խաղաղության համաձայնագրում, քանի որ կայուն խաղաղությունը մնում է անխուսափելի, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը մնում է բռնի տեղահանված իր պապենական հողերից:

Եթե մենք իսկապես ցանկանում ենք տարածաշրջանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հասնել արդար եւ երկարատեւ խաղաղության, Հայաստանը պետք է հաղթահարի պատերազմի վախը, երբ պաշտպանում է իր օրինական իրավունքները, եւ Ադրբեջանը պետք է դուրս գա իր էյֆորիկ վիճակներից, որոնք դեռեւս գերիշխում են 44-օրյա պատերազմի ավարտից հետո, դադարեցնի Հայաստանի հետ խաղաղ բանակցությունները դիտել եւ դրանց վերաբերվել որպես կապիտուլյացիոն գործընթացի շարունակություն:

Բանակցություններն աշխատում են, երբ երկու կողմերն էլ բարեխղճորեն եւ ճիշտ մտածելակերպով են ներգրավում դրանցում, նույնիսկ եթե վստահության պակաս կա: Այսօր երկու կողմերն էլ, ինչպես նաեւ միջազգային հանրությունում շատերը, կարծես թե կարծում են, որ ռազմական կորուստը (հայերն իսկապես ռազմական կորուստներ են ունեցել) հավասարազոր է զիջելու բոլոր միջազգային նորմերը, մարդու, քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները եւ ենթարկվելու մյուս կողմի առաջարկած ցանկացած կանոնին: Սա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործադրելի բանաձեւ չէ եւ ակնհայտորեն լավ նախադեպ չէ ամբողջ աշխարհում ընթացող այլ հակամարտությունների խաղաղ կարգավորման համար[123]:

Խաղաղությունը պահանջում է մարդկային արժանապատվություն, իսկ մարդկային արժանապատվությունը միշտ արմատավորված է մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման մեջ. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբ

[123] https://www.civilnet.am/en/news/785226/karabakh-armenians-return-under-international-protection-key-for-lasting-peace-between-armenia-azerbaijan-vartan-oskanian/

«Այսօր լրանում է Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումների եւ ցեղասպանությանհետեւանքով Լեռնային Ղարաբաղից՝ իրենց նախնիների հողերից վտարված ավելի քան 100.000 հայերի բռնի տեղահանման մեկ տարին: Այս ծանր տարեդարձին մենք հարգում ենք արմատախիլարված կյանքերն ու հիշում վերապրած ցավալի իրադարձությունները: Սա դաժան հիշեցում է, որ այսճգնաժամը հեռու է ավարտից, իսկ արդարությունը՝ դեռեւս անհասանելի: Վերադարձի իրավունքըպետք է լինի իրացվող ջանքերի առաջնագծում:

Բաքվի ապամարդկային հռետորաբանությամբ եւ ցեղասպան մտադրություններով խթանվածզանգվածային բռնի տեղահանումը, որը նշանավորվեց ինամսյա ավերիչ շրջափակմամբ եւբացահայտ ռազմական ագրեսիայով, միջազգային իրավունքի ակնհայտ խախտում էր: Ադրբեջանընձգտել եւ իրագործել է Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերի զանգվածային ոչնչացումը՝ մի ամբողջքաղաքակրթություն հեռացնելով իր հայրենիքից եւ պարտավորություն ստանձնելով ոչնչացնել նրաքաղաքական, մշակութային եւ կրոնական ներկայության եւ հիշողության բոլոր մնացորդները:

Սա անընդունելի է: Սա Լեռնային Ղարաբաղում հայ ժողովրդի հազարամյա շարունակականներկայության պատմական խաթարում է:

Տեղահանված ժողովուրդները հայրենիք վերադառնալու անքակտելի իրավունք ունեն. այսսկզբունքը վերահաստատել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանը 2023 թվականի նոյեմբերյանորոշմամբ՝ Ադրբեջանից պահանջելով ապահովել 2023 թվականի սեպտեմբերից հետո բռնիտեղահանվածների անվտանգ եւ անարգել վերադարձը:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման եւ վերադարձի անվիճելի իրավունք, իրավունքներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցանկացած տեւականխաղաղության համար: Մենք մերժում ենք ցանկացած վարկած, որը ենթադրում է, որ ճգնաժամնավարտվել է միայն այն պատճառով, որ հայ բնակչությունը բռնի տեղահանվել է: Իսկականխաղաղությունը չի կարող կառուցվել մի ամբողջ ժողովրդի հարկադրանքի կամ ոչնչացման վրա:Տեղահանված անձանց իրավունքները պետք է հարգվեն, իսկ նրանց վերադարձը ապահովվիմիջազգային պաշտպանության ներքո:

Վերջին վեց ամիսների ընթացքում, Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի կողմից ստեղծված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբը հետամուտ է եղել վերադարձի եւ ինքնորոշման իրավունքի խթանման իր մանդատի իրագործմանը: Հանձնախումբը համագործակցել է միջազգային առանցքային դերակատարների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության եւ տարբեր պետությունների ներկայացուցիչների հետ՝ մշտապես

ընդգծելով տեղահանված բնակչության անվտանգ եւ հավաքական հայրենադարձության անհրաժեշտությունը: Այս ջանքերի շնորհիվ հարցը շարունակում է մնալ միջազգային օրակարգում,եւ այդ նպատակների համար կա զգալի միջազգային աջակցություն. աջակցություն, որն այժմ կախված է Հայաստանի կառավարության ակտիվ առաջնորդությունից:

Մենք կոչ ենք անում Հայաստանի կառավարությանը՝ վճռական գործողություններ ձեռնարկել այս կարեւորագույն ուղղությամբ Ադրբեջանի հետ խաղաղ բանակցություններում: Առանց վերադարձի իրավունքի չի կարող լինել կայուն խաղաղություն տարածաշրջանում: Միջազգային հանրությունը պատրաստ է աջակցել այս գործին: Սակայն Հայաստանի կառավարությունը պարտավոր է վճռականորեն եւ հաստատակամորեն պաշտպանել վերադարձի իրավունքը:

Այս հարցի շուրջ Հայաստանի կառավարության լռությունը ոչ միայն խաթարում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքները, այլեւ վտանգում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ անվտանգությունը:

Խաղաղությունը պահանջում է մարդկային արժանապատվություն, իսկ մարդկային արժանապատվությունը միշտ արմատավորված է մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման մեջ»[124]:

19.09.2024

[124] https://news.am/arm/news/843257.html

HRC54 – Համատեղ հայտարարություն Լեռնային Ղարաբաղում իրավիճակի մասին [125]

2023 թվականի հոկտեմբերի 11-ին Ժնեւում տեղի ունեցած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրջանի ընթացքում 34 երկրներ[126] հանդես եկան այս համատեղ հայտարարությամբ՝ խորը մտահոգություն հայտնելով Լեռնային Ղարաբաղում մարդասիրական եւ մարդու իրավունքների ծանր ճգնաժամի կապակցությամբ, որը հանգեցրեց գրեթե ողջ էթնիկ հայերի տեղահանմանը: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը՝ ավելի քան 100,000 մարդ ապաստանել է Հայաստան.

Համատեղ հայտարարությունն ընթերցել է Ժնեւում ՄԱԿ-ի գրասենյակի Ֆրանսիայի մշտական ներկայացուցչությունում, Ֆրանսիայի մշտական ներկայացուցչի տեղակալ, դեսպան Քրիստին Թուդիչը:

Մենք չափազանց մտահոգված ենք Լեռնային Ղարաբաղում հումանիտար եւ մարդու իրավունքների սարսափելի ճգնաժամով եւ վերջին շաբաթների ընթացքում այնտեղից փախուստ տված բնակչության վիճակով:

Տարածաշրջանում ՄԱԿ-ի առաքելության զեկույցի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ էթնիկ հայ բնակչությունը՝ ավելի քան 100,000 մարդ փախուստ է տվել Հայաստան: Նրանց զեկույցում իրավացիորեն նշվում է այն տառապանքը, որը պետք է պատճառեր այս փորձը:

Էթնիկ հայերի այս զանգվածային տեղահանումն իրենց տներից բխում է սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սկսված ռազմական գործողությունից եւ Լաչինի միջանցքի իննամսյա շրջափակումից, որը հանգեցրեց հումանիտար ծանր պայմանների:

Մենք գնահատում ենք, որ [Մարդու իրավունքների] Գերագույն հանձնակատար Թուրքի սեպտեմբերի 26-ի հայտարարությունը կոչ է անում պաշտպանել էթնիկ հայերի իրավունքները, պաշտպանել քաղաքացիական անձանց եւ պահպանել միջազգային

---

[125] https://switzerland.mfa.am/en/news/2023/10/11/hrc54-%E2%80%93-joint-statement/12149 , բնագիրը՝ անգլերեն, հայերենի թարգմանությունը՝ խմբագրության կողմից:

[126] Հետագային 40, տեսնել ներքեւը. Սկզբնական 34 երկրներն էին. Հայաստան, Ավստրալիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կանադա, Խորվաթիա, Կիպրոս, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Իսլանդիա, Իռլանդիա, Ճապոնիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա , Պորտուգալիա, Իսպանիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, Շվեյցարիա, Միացյալ Թագավորություն, Ուրուգվայ եւ Միացյալ Նահանգներ:

իրավունքը: Մենք լիովին համաձայն ենք, որ «մարդու իրավունքների կամ միջազգային մարդասիրական իրավունքի արձանագրված խախտումները պահանջում են հետաքննություն, ներառյալ արագ, անկախ եւ թափանցիկ հետաքննություն»:

Մենք կարծում ենք, որ համապատասխան հաջորդ քայլը ՄԻԳՀ Գրասենյակի կողմից Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների իրավիճակի ուշադիր մոնիտորինգն է, հանդիպել փախստականներին եւ տեղահանվածներին եւ մնացածներին, ինչպես նաեւ տեղեկացնել այս Խորհրդին: Ուստի մենք հորդորում ենք Հայաստանին եւ Ադրբեջանին հրավիրել ՄԻԳՀԳ-ին հնարավորինս արագ՝ իրենց նման տեխնիկական աջակցություն ցուցաբերելու իրենց:

Այս պահին մենք կոչ ենք անում Ադրբեջանին ապահովել Լեռնային Ղարաբաղի մնացած հայերի իրավունքներն ու անվտանգությունը եւ անհապաղ պայմաններ ստեղծել հայրենիք գնալ ցանկացողների կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար: Նրանց մշակութային եւ կրոնական ժառանգությունը նույնպես պետք է երաշխավորվի եւ պաշտպանվի:

Մենք նաեւ կոչ ենք անում Ադրբեջանին հետեւել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից սեպտեմբերի 22-ին ընդունված միջանկյալ միջոցներին եւ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին, 2023 թվականի փետրվարի 22-ին եւ 2023 թվականի հուլիսի 6-ին ընդունված Արդարադատության միջազգային դատարանի ժամանակավոր միջոցներին:

Մենք կոչ ենք անում Հայաստանին, միջազգային հանրության աջակցությամբ, շարունակել մարդասիրական օգնություն ցուցաբերել ճգնաժամի հետեւանքով տեղահանվածներին:

Միջազգային մուտքը Լեռնային Ղարաբաղ շատ կարեւոր է օգնություն եւ անկախ մոնիտորինգ տրամադրելու, այդ թվում՝ մարդու իրավունքների իրավիճակի մասին զեկուցելու համար:

Ավելին, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պետք է լիովին հարգվեն: Մենք վճռականորեն աջակցում ենք բոլոր կողմերի միջեւ երկխոսությանը՝ համապարփակ եւ կայուն խաղաղություն ապահովելու համար:

Մենք կշարունակենք ուշադիր հետեւել իրավիճակին եւ դիտարկել Խորհրդի ցանկացած եւ բոլոր համապատասխան հետագա քայլերը:

* * *

Համատեղ հայտարարությունը հովանավորած պետությունների ցանկը

1. Անդորրա
2. Արգենտինա
3. Հայաստան
4. Ավստրալիա
5. Ավստրիա
6. Բելգիա
7. Բուլղարիա
8. Կանադա
9. Խորվաթիա
10. Կիպրոս
11. Չեխիա
12. Դանիա
13. Էստոնիա
14. Ֆինլանդիա
15. Ֆրանսիա
16. Գերմանիա
17. Հունաստան
18. Իսլանդիա
19. Իռլանդիա
20. Ճապոնիա
21. Լատվիա
22. Լիխտենշտեյն
23. Լիտվա
24. Լյուքսեմբուրգ
25. Մալթա
26. Մարշալյան կղզիներ
27. Հյուսիսային Մակեդոնիա
28. Հոլանդիա
29. Նոր Զելանդիա
30. Նորվեգիա
31. Լեհաստան
32. Պորտուգալիա
33. Իսպանիա
34. Սլովակիա
35. Սլովենիա
36. Շվեդիա
37. Շվեյցարիա
38. Միացյալ Թագավորություն
39. Ուրուգվայ
40. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ARMENIAN LEGAL CENTER

Artsakh/Nagorno-Karabakh: A Case Study in Ethnic Cleansing

2024

Freedom House IPHR International Partnership for Human Rights Democracy Development Foundation Protection of Rights Without Borders NGO TRUTH HOUNDS

Why Are There No Armenians In Nagorno-Karabakh?

Fact-Finding Report Summary

Caucasus Heritage Watch

Monitoring Report #7
June 2024

Ian Lindsay, Adam T. Smith,
Husik Ghulyan, & Lori Khatchadourian

©2024 CAUCASUS HERITAGE WATCH

Cornell Institute of Archaeology
and Material Studies
Cornell University
261 McGraw Hall
Ithaca NY 14853
USA

ECLJ

The Systematic Erasure of Armenian Christian Heritage in Nagorno-Karabakh

June 2024

PRO ARTSAKH

ՊՐՈ ԱՐՑԱԽ | ПРО АРЦАХ | PRO ARTSAJ | برو أرتساخ

Արցախի բարեկամների միջազգային ցանց
International Network of The Friends of Artsakh
Réseau international des amis de l'Artsakh
Red internacional de amigos de Artsaj
Internationales Netzwerk von Freunden von Artsakh
Международной сети друзей Арцаха
شبكة دولية من أصدقاء أرتساخ





Ethnic Armenians in Nagorno-Karabakh

Report on Prevention of Genocide

Juan E. Méndez

Luis Moreno Ocampo

Genocide Against Armenians in 2023

Expert Opinion